

ՀԱՅՈՒԹԵԱՆ Վ.

ՅՈՐԵԱԻ ՆԵՐՍՈՒԹՅՈՒՆ  
■ ■ ■ ԻՎԱԶԵՎՈՒՄ ■ ■ ■

633.1

2549

գ-86

Դաշտավայրի մ.

Սովորութեան հետաքրքրութեան

համացանց. 1939. գ. 1n.

МЕДИАЛЫК АСТАР АЙЫРЫМЫ, ИЖАРЭ.

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ  
БИОЛОГИЧЕСКИЙ ИНСТИТУТ—СЕКТОР ГЕНЕТИКИ РАСТЕНИЙ

ГУЛКАНЯН В.

**ВНУТРИСОРТОВОЕ  
СКРЕЩИВАНИЕ  
ПШЕНИЦЫ**

ИЗДАНИЕ АРМФАНА

ЕРЕВАН

1982

ԽԱՀԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱԼԻՆ

ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ-ԲՈՒՑԵՐԻ ԳԵՐԵՏԱԿԱՅԻ ՄԵԿՏՈՐ

633.11:631.52

գ-86

ՀՈՒՂՔԱՆՅԱՆ Վ.

ԱՅՈՒԹՎԱԾ է 1961 թ.

ՅՈՐԵՆԻ  
ՆԵՐԱՈՐՏԱՎԻՆ  
ԻՎԶԱՉԵՎՈՒՄԸ

A 2732



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅԱՆԻՒԹ


1696406

1939

Տ Պ Ե Ս Գ Ր Վ Լ Ւ Տ Մ Ե

ԽԱՆՉՈՅ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԱԼԱՆՆԻ  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՎԼՐՈՇՄԱՆ

‘Եպիսկոպոսի տեղուկական’ Ա. ԿԱՐԱԳՅԱՆ



ԱԿԱԴԵՄԻԿ Տ. ԴԻՍԵՆԿՈ



## Ա. Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

ԽԾՀՄ Դիառաթյունների Ակադեմիայի հայկական Յիշում  
ավագ գիտական աշխատող ընկ. Վ. Ռ. Գուլքանյանի այս աշխա-  
տաթյունը՝ ցորենի ներսութաային խաչաձևման մասին, հանդե-  
պատմ և առաջին այն սերիայի աշխատաթյունների մեջ, կո-  
րը Թիսլոգիական ինստիտուտի բույնուրի գենեալիկոյի անկանու-  
պեաը և հրատարակի մեր կոլանտեսությունների, զյանդանանու-  
մարի, խըճիթ-լաբորատորիանների աշխատողների և բրիգադա-  
գարների համար:

Աշխատաթյունների այդ շարքին են պատկանում նու-  
հրատարակության համար պատրաստված այնպիսի բրոցյալիներ  
ինչպիսիք են՝ «Ծորենի մասսայական ընտառաթյունը», «Կաթու-  
ֆիլի ամսաւյին ցանքը» և այլն:

Սերիայի հրատարակության նպատակն է՝ պինել մեր պահ-  
պահանանելին, կոլանտեսական փորձագիտությանը և խըճիթ-լա-  
բությանը աշխատազներին առաջավաը պյուդունիոնական  
պիտության նվաճամներով, ոգնել նրանց այն կաքնոր պիտու-  
նիոնազատական տշխատանքներում, վոր նրանք կանաչութեամ են  
բայց ների ընթրքատվությունը բարձրացնելու և բարձր բնորու-  
թյուն ունեցող սերմացու սուսնութեա ուղղությամբ:

\* \* \*

Ընկ. Վ. Ռ. Գուլքանյանի գիրը մատչելի ձեզ շաքա-  
րում և բույնուրի բնողմնավորման ըիտլուդիայի հետաքրքիր յերե-  
փուրիթները և սովորեցնում և ընթերցողին, թե ինչպնտ աշխատել  
ցարենի սերմացույի ընթրքատվությունը բարձրացնելու համար,  
սպառագործելով տէագիմիկ Տ. Դ. Լիսենկոյի կողմից մշակված՝ ըստ  
այրի ներսութաային խաչաձևման պրիոմը:

Չնայած վոր պիրը նվիրված և ցորենի սերմացույի ընթ-  
րքատվության բարձրացման միջացներից մեկի՝ ներսութաային խո-

Համեման մանրամասն նկարագլւմանը, այնուամենայնիվ դրանք շատիվող խնդիրների շարադրությունն այնքան բազմակողմանիք է, որ ուշադիր ընթերցողը կարող է շատ գիտելիքներ ձեռք բերել նըանից:

Սերմնաբուծությունը իրճիթ-լարորատորիաների աշխատավորների և կոլանաեսական փորձագետների աշխատանքի կարևոր հագավառն և հանգիստանում:

Ամեն մի գյուղատնակա, իրճիթ-լարորատորիայի աշխատող և կոլանաեսական փորձագետ պետք է հիշի, որ սերմնաբուծական աշխատանքի մեջ ամենազլիսավորը—գու բայցձր ագրառնինիկան և և անընդհատ ընարությունը:

Սերմացույի համար՝ ընտրել ամենաբերքատու ցանքը, այդ ըակ ցանքից ընտրել լավագույն բույսերը, լավագույն ըույներից ընտրել ամենալավ հասկերը և ամենալավ հասկերից՝ լավագույն հատիկները, ապա ստացված սերմերը ցանել լով մշակված հողում—ահա զորն և թե սերմացույի բերքատվության բարձրացման. և թե ընտրության միջոցով նոր բերքատու սորտեր ստեղծելու պմենանիշա ճանապարհը. այդ ճանապարհով պետք է գնան մեր իրճիթ-լարորատորիաների աշխատաղները և կոլանաեսական փորձագետները՝ բարձրորակ սերմացու ստանալու համար.

Լավ մշակել բույսերը, նրանց նկատմամբ՝ դործագրել զետության կողմից արգած պրիորները, այդ թվում նուև ներսորային խաչաձեման պրիոմը և անընդհատ ընտրել, միշտ ընտրել լավը, թողնելով վտաը—սա յեւ սերմացույի աղնվացման, նրա բերքատվության բարձրացման ստուգված յեղանակը.

Ցորենի ներսորային խաչաձեմը լավագույն միջոցներից մեկն և մեր սերմացուն թարմացնելու, նրա բերքատվությունը բարձրացնելու համար:

Դուստրկությունը և կառավարությունը մեծ կարևորությունի են. ապլիս ցորենի ներսորային խաչաձեման աշխատանքներին և Սերմնաբուծությունը կազմակերպելու և հացահատիկացին կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու միջոցաւումների մասին հայկական ԽՍՀ ժողկոմիուրնի և ՀԿ(ը)Կ կենտրոնի 1939թ. փետրվարի 3-ի վարտշման մեջ ասված է.

«Բներբառավարյան բարձրացման յեկ սերմերի վարակի բարերավման գործում բացառիկ կարենվոր նօտնակություն

առաջնակ ներսության խաչաձևվմանը, պարտավորուցնելով Հայոց կամացան ԽՍՀ Հազ ժողկումատին 1939 թվին կազմակերպելով աօնանացան յեզ գործանացան ցուենիների ներսության խաչաձևվում առնելով 400 կոլեճնեռարյուններում:

Այդ վորոշման մեջ ասվում է նաև, վոր ներսորաային խաչաձևվումը՝ պետք և կատարել կարանտեսությունների բերքադիմությամբ բարձր ցանցերում, բույսերի անհատական ընտրությամբ:


Հազարավոր կարանտեսականներ՝ պյուղաանտեսների, ԽՍՀ Հիմ- կարգ-լարութառության աշխատողների և կարանտեսական փորձա- զմանների հետ միասին կատարելու յեն ցուենի ներսորաային խաչաձևման աշխատանքը:

Հասկանալի յե այն մեծ պահանջը, վոր արդեն գոյության ամի համապատասխան պլականության վերաբերյալ

Ներսորաային խաչաձևման, Ինչպես և ընդհանրապես բռնյաերի բեղմնավորման ըէկորզիայի վերաբերյալ հայերեն դրականություն կուտանտական ակախովի համար զեռ չկա. ընկ. Դ. Շուկրանյանի այս աշխատության հրատարակումով ԽՍՀՄ Դիրությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալը ձեռնամուի և մինում այդպիսի պլականության ստեղծմանը:

Բիոլոգիական գիտարյունների բնկնածու:

Գ. ԲԱՐԱՁԱՆՑԱՆ



## ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՑՈՐԵՆԻ ԲՈՒՑՍԻ ՄԱՍԻՆ

Խորհրդային խոշորագույն գիտնական, ակադեմիկ  
Տրոֆիմ Դենիսովիչ Լիսենկոն 1935 թվին առաջարկեց  
մի միջոց, վորք բարձրացնում ե մի շարք բույսերի  
բերքատվության հատկությունը։ Այդ միջոցը բույսե-  
րի ներսուրտային խաչաձեվումն ե, վորք ահա քանի  
ուսորի յէ կատարվում ե զանազան բույսերի վրա, ա-  
ռաջին հերթին ցորենի վրա, և տաշիս ե հրաշալի  
արդյունքներ։

Ակադեմիկ Լիսենկոյի առաջարկը՝ ներսուրտային  
խաչաձեման մասին, ունի խոշոր գիտական հիմք։  
Հատ պարզ իմաստ, վորի մասին մի քիչ հետո կխո-  
սնք, իսկ այժմ տանք մի քանի անհրաժեշտ տեղեկու-  
թյուններ վորոշ բույսերի, այդ թվում նաև ցորենի  
մասին։

Բնության մեջ յեղող բույսերի մեծամասնությունը,  
այդ թվում նաև գյուղատնաեսության մեջ  
մշակվող բույսերը, կարող են բազմանալ ու բազմա-  
նում են սեռական ճանապարհով։ Բույսերն ևս, կեն-  
դանիների պես, ունեն արտկան ու իգական որդաններ։

Բույսերի սեռուկան որդանները տեղավորված են  
ծաղիկների մեջ։

Բույսի իգական որդանը կոչվում է վարսանդ, վարի  
ներքեալի մասում գտնվում է ուղիմնարանը,

գտնվում են մեկ կամ մի քանի սերմնասաղմեր, վո-  
րոնցից ամեն մեկի մեջ լինում է մեկ ձվարջիջ։ Առ-  
այս ձվարջիջներն են, վորոնք բեղմնավորվելով ծագ-  
կափոշով, տալիս են սերմ։

Բույսի արական որդանը կոչվում է առևչք, վորի-  
մեջ զարդանում ու հասունանում է ծաղկափոշին։  
Ծաղկափոշին տարածվելով քամու կամ միջատների մի-  
ջոցով, ընկնում է վարսանդի սպիթի վրա, ծլում և ու  
հասնելով ձվարջիջին, բեղմնավորում է նրան։  
**Սովորաբար առանց բեղմնավորության սերմ ու ստացվում։**


Կան բույսեր, վորոնց միևնույն ծաղիկներն ունեն  
թև արական և թե իգական որդաններ։ Այսպիսի բույ-  
սեր են՝ ցորենը, գարին, վարսակը, աշորան, արեվա-  
ծաղիկը, վոլորը, խաղողը, ծիրանը և այլն։ Մրանք  
կոչվում են յերկանու բույսեր։

Կան այնպիսի բույսեր, վորոնց ծաղիկների մի  
մասն ունի միայն արական որդան, իսկ մյուսը՝ միայն  
իգական։ Այսպիսի բույսեր են՝ յեղիպտացորենը, կաղ-  
նին, ընկուզենին, ձմերուկը, վարունդը և այլն։  
Մրանք կոչվում են միատուն բույսեր։

Կան նաև այնպիսի բույսեր, վորոնց բոլոր ծաղիկ-  
ներն ունեն կամ միայն արական, կամ միայն իգական  
որդաններ։ Այսպիսի բույսեր են՝ կանեփը, սոճին,  
թթենին, ուռենու չատ տեսակները և այլն։ Մրանք  
եւ կոչվում են յերկտուն բույսեր։

Քանի վոր այս գրքույկը նվիրված է ցորենի ներ-  
սորային խաչաձևման հարցին, ապա պետք է մի քա-  
նի աեղեկություն տանք հատկապես ցորենի բույսի  
ու սոռանձնադես նրա հասկը վերաբերյալ։

Յորենի բույսը թփանման եւ նա ունի փնջաձնվածութ (նկ. 1): Յորենի բույսը բաղկացած է ցողութ-



Նկ. 1 յորենի բույսը թփանման եւ նա ունի փնջաձնվածութ


սերից, վորոնց թիվը լինում եւ տարբեր, նոյյած թիվինչ տեսակի, ինչ սորտի յորեն եւ ինչ պայմաններում եւ աճում: Ուժեղ սնունդ տալու դեպքում, որինակ, լայնաշարք ցանքի պայմաններում, լավ պարտքացրած հողում, յորենի թուփիը կարող եւ բաղկացած լինել մինչև 100 և ե'լ ավելի ցողունից:

Պետք եւ ասել, վոր յորենի բույսի բոլոր ցողուններն ու հասկերը լավ դարձացած չեն լինում: Դրանց թվին են օլատկանում, որինակ, բեչաները: Միշտ ողնուք և նկատի առնել, վոր այդ թույլ հասկերը տալիս են թույլ, վոչ լիարժեք սերմեր:

Ամենալավ սերմերն ստացվում են ամենալավ, ուժեղ ու փարթած հասկերից:

Յորենի տերևնվար բաղկացած է յերկու մասից, վեհանցից մեկը փաթաթված է լինում շողումին, իսկ մյասն աղատ ե։ Տերևի այն մասը, զորը փաթաթված ն ցաղանին, կոչվում է տերեվարուն, իսկ աղատ մասը կոչվում է տերեվի թիթեղ (նկ. 2)։

Յորենի հասկը բաղկացած է առանձին հասկիկներից



Նկ. 2. Յորենի տերեւարունը և թիթեղը. ա, Տերեւարունը.  
բ. Ցերեկի թիթեղը

Հասկիկները կազմած են հասկի կոթունի ծնկիկների վրա (նկ. 3)։ Հասկի հիմքում գտնվող 2—3 հասկիկները սովորաբար թույլ ու նվազ են լինում։ Թույլ ու նվազ են լինում նաև հասկի ծայրին գտնվող 2—3 հասկիկները։ Միշտ նկատի պիտի առնել, վոր այդ թույլ հասկիկները տալիս են թույլ տերեւներ, իսկ ամենափարթագ, ամենալայն հասկիկները տալիս են լավ, խոշոր,

Հայոց սերմեր:  
Հասկիրիզ (նկ. 3) բաղկացած է 1-ից մինչև 5 է




Նկ. 3. Հասկիրիզ կաթումը և հասկիրիզները. ա. Հասկիրիզ, բ. Կոթումը

ավելի ծաղկից, վորոնք կպած են հասկիկի կոթունին: Այդ ծաղիկներից յուրաքանչյուրը կարող է տառատիկ, յեթև հաջող կերպով բեղմնավորվի:

Բայց նկատի պետք է առնել, վոր զարգացած համիկներ տալիս են հասկիկի այն ծաղիկները, վորոնք դասավորված են նրա դրսի կողմերում: Հասկիկի ներսի կողմում դասավորված ծաղիկները թույլ են տուլիս են թույլ, համեմատաբար մանր հատիկներ:

Ներսորտային խաչաձևում կատարելու համար անհրաժեշտ է լավ ուսումնասիրել հասկիկի և նրա մեջ գտնվող ծաղիկների կազմությունը:

Ցորենի յուրաքանչյուր հասկիկի իր յերկու կողմից առնի մեկտեղան թեփուկ: Այս թեփուկները կոչվում են




Նկ. 4: Ծարենի ծաղիկը: ա. Ծաղկային ներքին թեփուկ. բ. Ծաղկային արտաքին թեփուկ. գ. Առելքներ. Շ. Առելքի թելլիկը.

հասկիկային թեփուկներ։ Ահա այդ հասկիկային յերկու թեփուկի մեջ են զասավորված ծաղիկները, վորոնց թիվը, ինչպես ասացինք, լինում է 1-ից մինչև 3 և ավելի։

**Յորենի ծաղիկը (նկ. 4)** ունի յերկու թեփուկ, վորոնցից դրսինը կոչվում է ծաղկային արտաքին թեփուկ, և ներսինը՝ ծաղկային ներքին թեփուկ։ Ծաղկային թեփուկների արանքում տեղավորված են վարսանդը և առեջքները (նկ. 4)։

Յորենի առեջքների թիվը յերեք է։ Յորենի վարսանդի (նկ. 5) ներքեվի մասում գտնվում է սերմնարանը, իսկ վերեվի մասում՝ սպին։ Յերբ ծաղիկը լավ հասունանում է, սպին բացվում է և ստանում փետուրի ձև։

**Յորենի առեջքները (նկ. 4 և 5).** կպած են ծաղկե.



Նկ. 5. Յորենի սեռական որգանները ա. Առեջք, բ. Սպին սերմնարան, գ. Վարսանդ, յե. Առեջքի թելիկը։

Հիմքին շատ բարակ և նուրբ թելերով և յերբ պինցետով բռնում ենք առեջքներն ու ձգում, նրանք շատ հեշտությամբ պոկվում են։

Առեջքների մեջ պատրաստված է ծաղկափոշին։ Պետք է լավ ճանաչել իսկ և հասունացած առեջքներին։

բը. իսկ առեջքների ունենում են կանոչ դույն, իսկ հասունացած առեջքները լինում են դնդին դույնի, Յերբ առեջքները բոլորովին հասունանում են, նրանք պատովում են և նրանց միջից թափվուժ և ծաղկագուշին ու բեղմնավորում վարսանդը:

Աւրեմն, ինչպես տեսնում ենք, ցորենն այնպիսի բույս է, վորի միւնուցին ծաղկի մեջ միաժամանակ աեղավորված են թե՛ արական և թե իդական որդանները:

Վերեվում ասացինք, վոր սեռական որդաններ ունենալու ձևի հիման վրա բույսերը բաժանվում են յերեք խմբի: Դրանք հետեւյալներն են. 1) յերկսեռ բույսեր, 2) միատում բույսեր՝ և 3) յերկտում բույսեր:

Հարց ե ծագում, թե ի՞նչպես և կատարվում միոցուումը և բեղմնավորությունն այդ տարրեր խմբերին պատկանող բույսերի մեջ:

Այս հարցի պատասխանը շատ պարզ է: Յեթե միւնուցին տեսակին պատկանող մի բույս իր ծաղիկների մեջ ունի միայն արական որդաններ, իսկ մյուս բույսը՝ միայն իդական, այսինքն՝ բույսը յերկտուն է, ինչպես, որինակ, թթենին, ապա պարզ է, վոր այստեղ փոշուումը և բեղմնավորությունը կկատարվի տարրեր բույսերի միջև: Այսինքն, միայն իդական ծաղիկներ ունեցող բույսը, կամ, ուրիշ խոսքով՝ իդական բույսը, իր բեղմնավորության համար ծաղկափոշի կատանա (քամու կամ միջատների միջոցով) մի ուրիշ բույսից, վորի ծաղիկներն ունեն միայն արական որդաններ, այսինքն՝ միայն առեջքներ:

Հասկանալի յե, վոր միայն արական ծաղիկներ ունեցող բույսերը պտուղ չեն տալիս: Հասկանալի յե նաև այն, վոր յեթե մի վորեւէ վայրում գտնվեն միայն իդական բույսեր, ապա նրանք ես, ծաղկափոշի շստանալով, սլտուղ չեն տա: Յեթե մի վորեւէ հողամասում տնկում են միայն իդական բույսեր, ապա պարզ է, վոր այդպիսի տնկարանը բերք չի տա: Հետեւյապես, հասկանալի յե, վոր իդական բույսերի հետ միասին պետք է տնկել նաև արական բույսեր:

Պետք է ասել, վոր բնության մեջ ևս այլպես և  
լինում: Իդական ծառերի կողքին, իդական բույսերի  
կողքին աճում են նաև արական ծառեր, արական  
բույսեր:

Յերկառուն բույսերի փոշոտումը կոչվում է խաչա-  
ձև փոշոտում, իսկ բույսերը կոչվում են խաչաձև փո-  
շոտվող բույսեր:

Այն բույսերի մեջ, վորոնց վրա կան յերկու աեռի,  
պատկանող ծաղիկներ (որինակ՝ յեղիպտացորենը):  
Վորոնք ունեն միայն արական կամ միայն իդական որ-  
դաններ (այսինքն՝ բույսը միատուն է), փոշոտումը,  
բեղմնավորությունը կկատարվի և՛ միևնույն բույսի,  
և՛ տարբեր բույսերի մեջ: Այսինքն՝ մի բույսի արա-  
կան ծաղիկների փոշին կբեղմնավորի և՛ նույն բույսի,  
իդական ծաղիկները, և՛ մի ուրիշ բույսի իդական ծա-  
ղիկները:

Այսպիսի փոշոտումն ևս խաչաձև է, և բույսերն  
եւ համարվում են խաչաձև փոշոտվող բույսեր:

Յերկառու բույսերի փոշոտումն ու բեղմնավորու-  
թյունը ճիշտ հասկանալու համար պետք է նկատի առ-  
նել, թե այս բույսերը բա՞յց են ծաղկում, թե՞ դակ:

Բայց ծաղկումն այն է, յերբ առեջքը դեռ չհասու-  
նացած, դեռ ծաղկափոշի չտված, վարսանդը դեռ  
չբեղմնավորված, ծաղիկը լավ բացվում է և կարող է  
բեղմնավորվել:

Պարզ է, վոր այս դեպքում վարսանդի, ապիքի վրա  
ծաղկափոշի կընկնի՝

ա. կամ նույն ծաղկի առեջքից (ինքնափոշու-  
տում):

բ. կամ նույն բույսի ուրիշ ծաղիկների առեջքից  
(խաչաձև փոշոտում):

գ. կամ ուրիշ բույսի ծաղիկների առեջքից (խա-  
չաձև փոշոտում):

Փակ ծաղկումը նա յե, վոր ծաղիկը չի բացվում,  
վարսանդն ու նրա սպին հասունանում են փակ ծաղկի:

Բաւյսերի ՆՍԽ—8

մեջ։ Փակ ծաղկի մեջ և հասունանում նաև առեջքը և ծաղկափոշի տալով՝ փոշոտում ե վարսանդը։

Պարզ ե, վոր այս դեպքում, նույն բույսի, նույն ծաղկի առեջքից ստացված ծաղկափոշին բեղմնավորում ե, նույն բույսի, նույն ծաղկի վարսանդը։ Առա այս ե, վոր կոչվում ե ինքնափոշոտում։ և այս ձևով փոշոտվող բույսերն են, վոր կոչվում են ինքնափոշոտվող բույսեր։

Այս բույսերի թվին ե պատկանում նաև ցորենը։

Պետք ե ասել, վոր խիստ ինքնափոշոտվող բույսերի մեջ ևս թեև շատ քիչ չափերով, տեղի յեն ունենում խաչածե փոշոտում։ Այս չափազանց հետաքըլքը բարական յերեվույթի մասին ներքեվում ավելի մանրամասն կերպով կխոսենք։ Իսկ այստեղ նշենք հետեվլալը։ բույսերի տարբեր ձեվով փոշոտվելը և բեղմնավորվելը հետեվանք ե այն բանի, վոր նրանք (բույսերը) հարմարվել են բնության պայմաններին։ Մէ դեպքում բույսերի համար պայմաններ են յեղել խաչածե փոշոտվելու և բեղմնավորվելու, և նրանք պահպանել են իրենց գոյությունն այդ ձևով։ Մի այլ դեպքում, բույսերը հնարավորություն չեն ունեցել խաչածե փոշոտվելու ու բեղմնավորվելու և ժամանակ ըսթացքում հարմարվելով այդ պայմաններին, արվել են ինքնափոշոտվող ձեվեր ու այդպիսով չարունակել են իրենց սերունդը։ Սակայն ինքնափոշոտվող բույսերն արտաքին պայմաններին ավելի հաջողությամբ են հարմարվել շնորհիվ այն բանի, վոր նրանց մեջ ժամանակ առ ժամանակ տեղի յեն ունեցել և ունենում ե խաչածե փոշոտում։

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր բեղմնավորությունը, վորը հսկայական նշանակություն ունի բույսերի կյանքի համար, տարբեր բույսերի մեջ տարբեր ձևով ե կատարվում։

Հարց ե ծագում, թե բույսերի բեղմնավորության հիշված ձևերից վո՞րն ե դերադասելի բույսերի համար։ Հետաքրքրական ե նաև, թե մենք ինչպես պէտի ոգոտագործենք այդ բնական յերեվույթը մեր սոցիա-

լիստական գյուղատնտեսության համար:

Այդ հարցերին ճիշտ պատասխանելու և բույսերն ավելի արդյունավետ կերպով մշակելու համար մենք պետք են լավ ըմբռնենք, լավ հասկանանք բույսերի բիոլոգիան և հատկապես բույսերի խաչաձեվման իմաստն ու նշանակությունը:

ԲՈՒՅՍԵՐԻ ԻՆՔՆԱՓՈՇՈՏՄԱՆ ՎՆԱՍԱԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՆԿԱՉԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՆԿԱՉԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ակադեմիկ Լիսենկոն զարգացնելով Դարվինի սւածումները և խորը կերպով ուսումնասիրելով բույսերի կյանքը, յեկավ այն յեղբակացության, վոր այն բույսերը, վորոնք շարունակ բեղմնավորվում են ինքնափոշոաման միջոցով, ժամանակի ընթացքում այլասերվում են: Իսկ այլասերված բույսերի ցրտադիմացկունությունը լինում է ցածր, չորադիմացկունությունը նույնպես լինում է ցածր, հատիկի վորակը լինում է վատ, բերքասվությունը՝ պակաս, զանազան հիվանդությունների՝ ժանդին, մրիկին դիմադրելը՝ թույլ:

Վորակեսզի ինքնափոշուման միջոցով բեղմնավորվող բույսերը չայլասերվեն, ակադեմիկ Լիսենկոն 1935 թվին առաջարկեց ստիպել այդ բույսերին բեղմնավորվելու խաչաձեւ փոշուման միջոցով: Ակադեմիկ Լիսենկոն, նրա հետ միասին աշխատող գիտնականները, նրա աշակերտները, ակադեմիկ Լիսենկոյի ցուցմունքները կատարող կոլտնտեսականներն ապացուցել են, վոր բույսերի խաչաձեւ փոշումը հրաշալի միջոց է բույսերը բարեփոխելու համար: Այդ մի միջոց է, վորով բարձրանում է բույսերի բերքի քանակն ու վորակը, բույսերի ցրտադիմացկունությունն ու դիմացկունությունը հիվանդությունների դեմ, այդ մի միջոց է, վորի շնորհիվ բույսն ուժեղանում է և ամենաբարվում բնական պայմաններին:

Ինքնարեղմնավորման վնասակարությունը, նաև խաչաձեվ բեղմնավորման ողտակարությունը, վերաբերում են ինչպես կենդանիներին, այնպես եւ բույսերին:

Հայտնի յէ, վոր յերբ վոչխարի մի ընտանիք (մի վոչխարի սերունդ) յերկար ժամանակի ընթացքում իր միջից և խոյ (ղոչ) ստանում, այն ժամանակ այդ ընտանիքում սկսում են ծնվել թույլ գառներ։ Սա նշանակում ե, վոր վոչխարի այս ընտանիքն սկսում է այլասերվել։ Իսկ յերբ վոչխարի խոյը (ղոչը) փոխում էն, այն ժամանակ սկսում են ծնվել ուժեղ գառներ, վոչխարի սերունդն սկսում է բարելավվել և ուժեղանալ, այլասերման վտանգը վերանում է։

Կարելի յէ բերել նաև հավերի որինակը։ յերեմի հավի ընտանիքի աքաղաղը յերկար ժամանակի ընթացքում լինում է իր միջից, ապա այդ դեպքում, այդ հավերի սերունդը հետզհետե սկսում է այլասերվել, վորի հետեւանքով սկսում են ծնվել թույլ ճուռեր, հավերը թուլանում են, մանրանում, ավելի շատ են յենթարկվում հիվանդությունների, ձվերը թխական դնելու դեպքում ճուռ չեն տալիս, լակ են դուրս դալիս։

Առհասարակ բոլոր կենդանիների սերունդները, այլասերվում են, յեթե նրանց բազմացումը կատարվում է առանց արուն փոխելու։ Վոչ միայն այլասերվում է այդպիսի կենդանիների սերունդը, այլ և հաճախ սերունդ չի ստացվում։

Յերբ յերկար ժամանակ կենդանիների մի ընտանիքի արուն իրենից և լինում, ապա այդ դեպքում հաճախ և պատահում, վոր արուն թեև ծածկում է. եղին, բայց եղը չի բեղմնավորվում։

Բանիմաց անասնապահներն իրենց փորձից գիտեն, վոր անասունների արուն փոխելն ուղարկար և և ժամանակ առ ժամանակ այդպես ել վարվում են։

Այտենդ կարող է հարց առաջանալ, թե ի՞նչպես է, վոր վայրի կենդանիները չեն այլասերվում ու վոչընչանում, չե՞ վոր նրանց արուն փոխող չկա։ Պետք է տանել, վոր վայրի կենդանիների արուն փոխվում է. դու կատարվում է հետեւյալ կերպ։ վայրի կենդանիների արուների մեջ միշտ կուիվ է անզի ունենում։

ուժեղնեցը հաղթում են թույլերին և, կամ սպանում  
են նրանց, կամ հեռացնում եղից։ Առա այսպիս ե  
փոխվում վայրի կենդանիների արուն։ Յեզ պիսի ա-  
ռել, վոր վոչ միայն փոխվում են, այլ և եղին ծածկե-  
լու համար ընտրվում ե հաղթողը, այսինքն՝ ավելի  
ուժեղը։ Այսպիսով կատարվում ե բնական ընարու-  
թյուն։

Այլառերման յերեվույթը, ինչպես ասացինք վերե-  
վում, վերաբերում է նաև բույսերին։ Աշխարհա-  
կանչակ գիտնական Դարվինը և նրա դործը շարունա-  
կող, մեր ժամանակների լավագույն գիտնական, ակա-  
դեմիկ Լիսենկոն նշել են, վոր այն բույսերը, վորոնք  
բազմանում են ինքնարեղմնավորման միջոցով, այ-  
սինքն՝ ինքնափոշոտման միջոցով, ժամանակի ըն-  
թացքում այլառերվում են։ Այդ բանը Դարվինն ար-  
տահայտել ե շատ դեղեցիկ կերպով։ Նա ասել ե.

«Բնությունն ամենահանդիսավոր կերպով հայ-  
տարարում ե մեզ, վոր նա զզվանք ե զգում տեսական  
ինքնարեղմնավորման հանդեպ»։

Ակադեմիկ Լիսենկոն զարմանալի պարզությամբ  
ցույց տվեց, վոր ուժեղ են լինում այն բույսերը, վո-  
րոնք բեղմնավորվում են խաչաձեվ կերպով։ Իսկ այն  
բույսեները, վորոնք բազմանում են ինքնարեղմնավոր-  
ման միջոցով, թուլանում են և այլառերվում։ Ակադե-  
միկ Լիսենկոն բացատրեց, վոր ցորենի մի շարք ար-  
ժեքավոր սորտեր, վորոնք մի ժամանակ բավականին  
տարածված են յեղել, վերացել են այլառերվելու հե-  
տեւվանքով։

Յեթե «բնությունը զզվանք ե զգում տեսական  
ինքնարեղմնավորման հանդեպ», ապա ի՞նչ ե կատար-  
վում այդ բնության մեջ, ի՞նչ ե լինում այդ զզվանքի  
հետեվանքը։ Այդ զզվանքի հետեվանքը լինում ե այն,  
վոր ինքնարեղմնայի՛որման միջոցով բազմացող բույսե-  
րը ժամանակի ընթացքում այլառերվելով, թուլանում  
նե և, վերջի վերջո, վերտնաւմ։

Ինքնարեղմնավորման միջոցով բազմացող ըույսերի մեջ ևս նկատվում է խաչաձեվ բեղմնավորություն։ Ճիշտ ե, ինքնարեղմնավորվող բույսերի մեջ խաչաձեվ բեղմնավորությունը քիչ է լինում, բայց այնուամենայնիվ լինում է, և հենց այդ խաչաձեւ բեղմնավորությունից ստացվող բույսերն են, վորոնք ավելի կենաւնակ են լինում և ավելի լավ են հարմարվում բնական սրայմաններին։

Յերբ ինքնարեղմնավորվող բույսերի մեջ (որինակ՝ ցորենի) անց ե կացվում խաչաձեվ փոշոտում, սատավում և միանգամայն պարզ պատկեր, վորը հրաշալի կերպով ցույց է տալիս, թե ի՞նչպիսի մեծ տարրերություն կա ինքնարեղմնավորման հետեւմանքով այլուներված և խաչաձեվ բեղմնավորման հետեւմանքով լուրելավմած բույսերի միջև։

Յերկտուն բույսերը, միատուն բույսերը և յերկտուն բույսերն առաջ են յեկել բազմաթիվ տարիների ընթացքում։ Այդ բույսերը հարմարվել են բնական պայմաններին և այժմ ել շարունակում են հարմարվել։ Մարդն իր աշխատանքով պայմաններ ե ստեղծել, վորոյեսպի այդ բույսերից շատերն ավելի լավ հարմարվեն։ Բայց ամենից լավ հարմարվել են այն բույսերը, վորոնք բազմանում են խաչաձեւ բեղմնավորության միջոցով։

Բույսերը հարմարվելով բնական պայմաններին՝ հողին, ողին, արևին, խոնավությանը, հարմարվել են նաև բազմանալու պայմաններին։ Բույսերը հարմարվելով հողին, ողին, արևին, խոնավությանը և այլն, իրենց համար ընտրել են այնպիսի պայմաններ, վորոնք ամենից ավելի նպաստավոր են իրենց դոյտւթյունը ողահաղանելու համար։ Բույսերը հարմարվելով նաև բազմանալու պայմաններին, ընտրել են ամենանպատավորը, այսինքն՝ խաչաձեւ բեղմնավորվելու յեղանակը։

«Զգվանք զգալով» ինքնարեղմնավորությունից,  
22

բռւյսերն այնպես են հարմարվել, վոր կարողանան  
խուսափել դրանից:

Այսպես որինակ, յերկտուն բույսերը, հասկանալի  
պատճառով, յերբէք չեն կարող ինքնարեղմնավորվել:

Միատուն բռւյսերն ևս ամեն կերպ խուսափում են  
ինքնարեղմնավորությունից: Խուսափում են նախ նը-  
րանով, վոր նրանց արական և իգական որդանները  
դառնվում են առանձին ծաղիկների մեջ: Շատ հա-  
ճախ, արական և իգական որդանները հասունացած  
սեռական բջիջներ են տալիս վոչ միաժամանակ, վո-  
րը հնարավորություն չի տալիս ինքնարեղմնավորու-  
թյուն կատարվելու:

Յերկսեռ բռւյսերից շատերն ևս հարմարվել են  
միայն խաչաձև բնղմնավորության համար: Այդ հար-  
մարեցումը կայանում ե նրանում, վոր այդ բռւյսերի  
ծաղիկների իգական և արական որդանները հասունա-  
նում են վոչ միաժամանակ: Շատ դեպքերում ել սպին  
ու առեջքներն այնպես են դասավորված լինում, վոր  
ինքնարեղմնավորությունը դժվարանում ե: Որինակ,  
սպին լինում ե բարձր, իսկ առեջքները լինում են  
ցածր: Առեջքների աված ծաղկափոշին չի կարող ընկ-  
նել սպինի վրա անմիջական կերպով, այլ կարող ե ընկ-  
նել միայն քամու միջոցով: Իսկ քամու միջոցով այդ  
փոշին կարող ե ընկնել և նույն ծաղկի, և' մի ուրիշ  
ծաղկի սպինի վրա:

Շատ հետաքրքրական ե այն հանգամանքը, վոր  
խաչաձև բեղմնավորմանը հարմարված բռւյսերն իրենց  
ծաղկափոշով համարյա թէ յերբեք չեն բեղմնավոր-  
վում: Որինակ, կարելի յն այդպիսի բռւյսերն անջա-  
ռնել մյուս բռւյսերից. պաշտպանել ուրիշ բռւյսերի  
ծաղկափոշուց, ինչպես ասում են՝ իզույսիայի յեն-  
թաքկել և տեսնել, վոր սրանք չեն բնղմնավորվում և  
ուրծ չեն բռնում: Ի հարկե, հասկանալի յե, վոր այս  
բռյալ ծաղկափոշին ցամու միջոցով ընկնում ե իբ-  
ուլիկի վրա, բայց միւնույն բռւյսի ծաղկի սպին չի ըն-  
դունում միւնույն բռյալի ծաղկափոշին, հակառակ

շեպքում ծաղիկը սերմ ու պառաղ կտար։ Բայց հենց  
վոր շատ բույսեր են լինում միմյանց մոտ, նկատվում  
են նորմալ բեղմնավորություն և պտղակալում։ Սա  
նշանակում է, վոր խաչաձև բեղմնավորմանը հար-  
ժարված բույսի սպին ընտրում է մի ուրիշ բույսի  
ծաղկափոշի։ Սա նշանակում է, վոր բույսի սեռական  
բջիջներն ունեն ընտրելու հատկություն։

Բազմաթիվ տարիների ընթացքում բույսերը պայ-  
քարել են բնական պայմաններին հարմարվելու հա-  
մար։ Այդ բույսերից՝ նրանք են շարունակել իրենց գո-  
յությունը, վորոնք հարմարվել են բնության պայման-  
ներին, վորոնք կարողացել են ընտրել բնությունից այն  
ամենը, ինչ նպաստում է իրենց գոյությունը պահպա-  
նելուն։ Որինակ, բույսի տերեվը միշտ հարմար դիրք  
է ընդունում, վորպեսզի անհրաժեշտ քանակությամբ  
լույս ստանա, բույսի արմատներն աճում են դեպի  
հողի այն շերտը, վորն անհրաժեշտ խոնավություն  
ունի, այդ արմատները հողից ընտրում են անհրաժեշտ  
սննդանյութեր։ Յեթե աճող արմատը հանդիպում է  
վորեւ խոչընդուածի, ապա այդ արմատն ընտրում է  
աճման այլ ուղղություն։

Մի խոսքով՝ բույսերն ընտրում են բնությունից  
այն ամենը, ինչ անհրաժեշտ է իրենց գոյությունն ա-  
վելի լավ պահպանելու համար։

Բույսի գոյությունն ավելի լավ պահպանելու  
պայմաններից մեկն ել նույն տեսակին պատկանող մի  
ուրիշ բույսի ծաղկափոշով բեղմնավորվելն է, վորին,  
հարմարվել են բույսերը բազմաթիվ տարիների ըն-  
թացքում։ Իսկ ինչի հարմարվել են բույսերը, դեպի  
այն ել ձգտում են, և հեշտ չե գոխել նրանց այդ  
ձգտումը։ Որինակ, բոլոր դեպքերում, յերբ խաչաձև  
բեղմնավորմանը հարմարված բույսերին ստիպում են  
բեղմնավորվել ինքնափոշուման միջոցով, կամ սե-  
րունդ չի ստացվում, կամ ստացվում է թույլ, նվազ  
սերունդ։

Այսպիսով, հասկանալիք յեւ վար բույսերի բեղմ-

նավորությունը պատահական կերպով չի լինում, այլ  
կառարվում ե նրանց սեռական բջիջների ընտրովակա-  
նության հատկություն ունենալու հիման վրա:

Իսկ խաչածե գոշոտման դեպքում, սեռական  
բջիջների ընտրության ժամանակ, ընտրվում են ամե-  
նալավերը, ամենաուժեղները, տեղի յե ունենում ըս-  
տանություն սիրո հիման վրա», վորի շնորհիվ նրանց  
բեղմնավորությունից ստացված սերունդն ավելի ուժեղ,  
փարթամ ու դիմացկուն ե լինում: Բույսերի ինքնա-  
բեղմնավորման ժամանակ ընտրության հնարավորու-  
թյունը սահմանափակ ե, իսկ խաչածեվ բեղմնավոր-  
ման ժամանակ՝ անսահմանափակ:

Բայց այստեղ կարող ե մի այսպիսի հարց առաջ  
դալ, թե յեթե բույսերի համար ավելի նպաստավոր  
է խաչածե կերպով բեղմնավորվելը, ապա ի՞նչն ե պատ-  
ճառը, վոր գոյություն ունեն բազմաթիվ բույսեր, վո-  
րոնք բազմանում են ինքնաբեղմնավորման միջոցով:

Ինքնաբեղմնավորվող բույսերի թիվն իրոք բավա-  
կանին մեծ ե, և վերևում դրված հարցը տեղին ե:  
Դարվինը տվել ե այս հարցի պատասխանը, վորը հե-  
տեւվյալն ե. բույսերը ձգտում են պահպանել իրենց  
գոյությունը և հարմարվում են բնական պայմաննե-  
րին: Այն դեպքում, յերբ բույսերը հնարավորություն  
չեն ունեցել խաչածեվ կերպով բեղմնավորվելու, հար-  
մարվել են ինքնաբեղմնավորմանը և այդ ձեւով պահ-  
պանել են իրենց գոյությունը: Ահա այս ձեւով ե ա-  
ռաջացել բույսերի ինքնափոշոտման հատկությունը,  
վորը տեղի յե ունեցել հազարավոր տարիների ընթաց-  
քում, այսինքն, այսպես կոչված եվոլյուցիայի ըն-  
թացքում:

Ինչպես ասացինք, ինքնաբեղմնավորումը վը-  
նասակար ե բույսի համար, իսկ խաչածեվ  
բեղմնավորումը, ընդհակառակը, ոգտակար: Սա բացա-  
արրվում ե նրանով, վոր խաչածե բեղմնավոր-  
ման ժամանակ տեղի յե ունենում զամուսնություն ու-  
շան ժամանակ տեղի յե ունենում զամուսնություն ու-  
շան հիման վրա», վոր վարսանդն ընտրում ե ամենա-  
բավարակ բջիջը: Մակայն այս միայն հարցի մի

կաղմն եւ և կա մի այլ, չափազանց կարևոր հանդա-  
մանք, ահա այս հանգամանքը ճիշտ բացատրելու հա-  
մար պետք եւ լավ պատկերացնել, թե իրենից ի՞նչ է  
ներկայացնում բույսի սեռական բջիջը, կամ, ինչպես  
ասում են, գամետան:

Բույսի սեռական բջիջը, կամ գամետան, ընդու-  
նակ եւ բեղմնավորելու (յեթե արական ե) կամ բեղմ-  
նավորվելու (յեթե իդական ե): Սեռական բջիջները  
միմյանց միանալուց հետո, կամ, ինչպես ասում են.  
զեղուտա կազմելուց հետո, ընդունակ են զարդանալու-  
և նոր որդանիզմ, նոր բույս տալու:

Հասկանալի յե, վոր յերբ բույսը բազմանում է  
ինքնարեղմնավորման միջոցով, ապա այդ դեպքում,  
թէ՛ արական և թե իդական բջիջները միևնույն բույ-  
սից են: Իսկ յերբ բույսը բազմանում է խաչածի  
բեղմնավորման միջոցով, ապա այդ դեպքում, արա-  
կան և իդական բջիջները տարրեր բույսերից են:

Յերկու սեռական բջիջների միացումից առաջացած  
նոր որդանիզմի մեջ յուրաքանչյուր սեռական բջիջ  
արտահայտում եւ իր ծնողի հատկությունները:

Յեթե թե՛ արական և թե իդական բջիջները միե-  
նաւյն ծնողներից են, ապա պարզ ե, վոր նրանք յեր-  
կառն ել նոր որդանիզմի. մեջ կարտահայտեն միեվ-  
նույն ծնողի հատկությունները և այս նոր որդանիզմը  
նման կլինի ծնողական որդանիզմին, այն որդանիզ-  
մին, վորից ստոցվել են սեռական բջիջ-  
ները:

Հասկանալի յե, վոր վոչ մի բույս  
(ինչպես յեվ վոչ մի կենդանի) չի կարող ճիշտ  
յեվ ճիշտ նույնը լինել, ինչ վոր նրա ծնողն  
է յեղել, և վորեւ բանով կտարրերվի: Բայց նկատի  
պետք ե. ունենալ, վոր վորքան շատ նման լինեն ծնո-  
դական բույսի և նրա սերնդի աճման սլայմանները,  
այնքան ել նրանք շատ նման կլինեն միմյանց և, ընդ-  
հակառակը, վորքան քիչ նման լինեն նրանց աճման  
սլայմանները, այնքան ել նրանք քիչ նման կլինեն մի-  
մյանց:

Յեթէ սեռական բջիջները տարբեր ծնողներից են, ասլա նոր որդանիզմի մեջ նրանցից յուրաքանչյաւրը կարտահայտի իր ծնողի հատկությունները։ Այս նոր որդանիզմը, այսինքն նոր բույսը, նման կլինի և' աբական բջիջի ծնողին, և' իգական բջիջի ծնողին, այսինքն՝ նման կլինի և' հօրը, և' մորը։ Բայց պետք ե նկատելունենալ, վոր յեթե այս նոր բույսի մշակման պայմաններն ավելի շատ նման լինեն հոր մշակման պայմաններին, առաջ առ ավելի նման կլինի հորը և, ընդհակառակը, յեթե սրա մշակման պայմաններն ավելի շատ նման լինեն մոր մշակման պայմաններին, առաջ առ ավելի նման կլինի մորը։

Ամենակարեվորն այն ե, վոր ինքնարեղմնավորման միջոցով ստացվող բույսն իր մեջ ունի միայն մեկ բույսի հատկություն, իսկ խաչաձև բեղմնավորման միջոցով ստացվող բույսը՝ յերկու բույսի հատկություն։ Սա նշանակում ե, վոր ինքնարեղմնավորման միջոցով ստացվող բույսը հեշտությամբ կարող է հարմարվել միայն մի տեսակ պայմանների և, հետեւ վապես, նրա մշակելու հնարավորությունն ավելի փոքր կլինի։ Իսկ խաչաձև բեղմնավորման միջոցով ստացվող բույսը հեշտությամբ կարող է հարմարվել թե՛ մայր բույսի և թե հայր բույսի պայմաններին և, հետեւ վապես, նրա մշակելու հնարավորությունն ավելի մեծ կլինի։

Այստեղին ել պարզ ե, վոր խաչաձևվ բեղմնավորման միջոցով ստացվող բույսն ավելի արժեքավոր ե, քան թե ինքնարեղմնավորման միջոցով ստացվող բույսը։

Ահա սրանով ե բացատրվում բույսերի ինքնարեղմնավորման վնասակարությունը և խաչաձև բեղմնավորման ոգտակարությունը։

ՑՈՐԵՆԻ ՑԱՆՔԻ, ՍՈՐՏԻ  
ՅԵՎ ԲՈՒՑՍԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ԽԱՉԱՎԱՆ ՀԱՄԱՐ.

Յուրևնի ներսորտային խաչածեվումն անցկացնելու  
համար շատ մեծ նշանակություն ունի ցանքի սորտի,  
իսկ ցանքի մեջ՝ բույսերի ընտրությունը։ Ներսորտա-  
յին խաչածեվման համար անհրաժեշտ ե ընտրել այն-  
պիսի ցանք, վորը զտասորտ ե, կամ թե չե, ունի  
բարձր զտասորտություն։ Ինչպես առհասարակ ամ-  
բողջ Միության մէջ, այնպես ել Հայաստանում կան  
լոյն հնարավորություններ զտասորտ կամ բարձր  
զտասորտություն ունեցող ցանքեր ընտրելու։

Հայաստանում մշակվում ե «Ռւկրաինկա» սորտը։  
Մասսայական ընտրության միջոցով ընտրված ցորեն-  
ների ցանքեր ունենք համարյա թե մեր բոլոր չրծան-  
ներում ե բոլոր կոլտնտեսություններում։ Այդ-  
պիսի ցորեններից կարելի յե թվել, որինակ,  
«Սպիտակահատը», «Դելֆին», «Համաղանիկումը»,  
«Գյուլգանին», «Երինացեռումը», «Ռուբրիցեպում»,  
«Գոմբրորկան» (տուկլուղ), «Ալթի-աղաջը», «Սլքա-  
հառը» յեվ այլն։ Այս բոլոր ցորենների ցանքերը  
կամ աղատ են խառնուրդներից, կամ թե չե չնչին  
խառնուրդ ունեն։

Իհարկե, շատ ցանկալի յե, վոր ներսորտային  
խաչածեվումը կատարվի..միանզամայն զտասորտ, մա-  
քուր ցանքում, բայց յեթե այդպիսի ցանք չկա, ներ-  
սորտային խաչածեվումը կարելի յե կատարել նաև  
այնպիսի ցանքում, վորի զտասորտաւթյունն ավելի  
պահեատ ե, մանավանդ յեթե այդ ցանքն ոչքի յե ընկ-  
նում բավ բերքատվաւթյանը։

Կարելի յե բերել հետեւյալ որինակը . Կոտայքի  
շրջանի Արամուս գյուղի կոլտնանսությունը 1937 թ.  
պետք ե կատարեր ներսորտային խաչաձեվում : Կոլ-  
տնանսությունն ուներ «Մուլրիցեպո» կոչվող ցորենի  
ցանք , վորի սերմացուն ստացել եր մասսայական ընտ-  
րության միջոցով : Սակայն մասսայական ընտրությու-  
նը բավականաչափ մաքուր չեր յեղել , վորի հետեւյան-  
քով ցանքի մեջ կային «Դելֆիի» և «Գրեկումի» հա-  
կեր , բայց շատ քիչ քանակությամբ : Հենց այդ ցան-  
քում ել կոլտնանսությունը կատարեց խաչաձեվում և  
ստացավ լավ արդյունքներ : Այս որինակը ցույց է  
տալիս , վոր ներսորտային խաչաձեվումը կարելի յե  
կատարել նաև այնպիսի ցանքի մեջ , վորի հիմնական  
մասը վորեւն տեսակի ցորեն ե , իսկ մյուս ցորենները  
կազմում են խառնուրդ : Բայց , կրկնում ենք , վոր  
ինչքան բարձր լինի ցորենի ցանքի բերքատվությամբ  
և զտածորտությունը , այնքան լավ արդյունք կստացվի  
ներսորտային խաչաձեվումից :

Ներսորտային խաչաձեվումը կատարելու ժամա-  
նակ ի՞նչպես վարվել , յեթե կոլտնանսությունը մշտ-  
կում ե վոչ թե մի , այլ մի քանի տեսակի ցորենն .  
պետք ե խաչաձեւում կատարել բոլոր տեսակների մեջ՝  
թե՛ աշնանացանի և թե գարնանացանի : Սա չափազանց  
կարեւոր է և ահա թե ինչու . ներսորտային խաչաձեւու-  
մը , ինչպես ասվեց վերեւում , վերանորոգելով ցորենի  
տեսակը , բարձրացնում ե նրա չորադիմացկումությու-  
նը , ցրտադիմացկումությունը , հատիկի սպիտակուցք  
քանակը , չպառկելու հատկությունը , մի խոսքով , ներ-  
սորտային խաչաձեւման հետեւյանքն այն է լինում .  
վոր ցորենը (նաև մյուս բույսերը) ավելի հեշտու-  
թյամբ ե հարմարվում բնական պայմաններին և այլն .

Ա շատ բերք է տալիս, քան չխաչածեմ ցորենը, և  
բերքի վորակն ել ավելի բարձր է լինում:

Հայտնի յե նաև, վոր վորքան հին է ցորենի տե-  
սակը, վորքան վաղուցվանից և մշակվում ցորենը,  
այնքան ավելի մեծ է լինում ներսորտային խաչածեվ-  
ման արդյունքը: Իսկ, ինչպես հայտնի յե, Հայաստա-  
նում մշակվող տեղական բոլոր ցորեններն ել հին են:

Մի ուրիշ հանդամանք ևս. հայտնի յե, վոր ներ-  
սորտային խաչածեվումը տարբեր պայմաններում  
տարբեր արդյունքներ ե տալիս, իսկ, ինչպես հայտնի  
յե, Հայաստանի տարբեր շրջանների պայմանները  
խիստ տարբերվում են միմյանցից:

Այս բոլորն ասում ե այն մասին, վոր ներսոր-  
տային խաչածեսում սկսելու կամ ցորենների  
մեջ, Այսպիսի աշխատանքի արդյունքն այն կլինի,  
վոր մենք ներսորտային խաչածեվման միջոցով կսուռ-  
դենք մեր բոլոր ցորենները, կպարզենք, թե նրանցից  
վա՞րն ե ամենից լավ յեվ ամենից շատ բերք  
տալիս, վո՞րն ե ավելի հարմարվող. մեր պայման-  
ներին, յեզ, ընտրելով ամենալավը լավերի  
միջից, սորտ կտանք և' մեր հանրապետությանը,  
և' մեր հարևան յեղբայցական հանրապետություննե-  
րին:

Շատ կարեվոր է նաև այն ցանքի ընտրությունը,  
վորի մեջ պետք ե կատարվի ներսորտային խաչա-  
ծեվմամբ: Համարյա թե միշտ, ամեն մի կոլտնտեսու-  
թյան ունենում է միևնույն տեսակի ցորենի մի քանի  
գոտի: Վո՞րն ընտրել այս ցանքերից: Ներսորտային  
խաչածեվման համար պետք ե ընտրել ամենալավ, պա-  
րաբռ և լավ մշակված հողում կատարված լավագույն  
ցանքը, վո՞րը խոստանում է ամենաբարձր բերք:  
Մի խոսքով, ներսորտային խաչածեսումը պիտի կ-  
տարել ամենաբերեցածու ցանքի մեջ:

Միտեղամայն հնարավոր է այսպիսի ժի գեղը,

գոր կոլտնաեսությունն ունենա մի տևակ ցորենի, ասենք թէ՝ «Ռուբրիցեպսի» յերկու ցանք, վորոնցից մեկի զաասորտությունը լինի բարձր, իսկ բերքատվությունը ցածր, մի այլ ցանքի զաասորտությունը ցածր, իսկ բերքատվությունը բարձր։ Վո՞րն ընտրել այս ցանքերից ներսորտային խաչաձեման համար։ Առանց տատանվելու պետք ե ընտրել այն ցանքը, վո՞րքի զաասորտությունը ցածր ե, բայց դրա փոխարեն բերքատվությունը բարձր ե։

Զավիազանց կարեոր ե նաև բույսի ընտրությունը։ Ամեն մի հողագործի հայտնի յի, վոր վորքան ել միատեսակ լինի հողը, վորքան ել զաասորտ լինի ցանած ցորենի սերմացուն, այնուամենայնիվ ցանքի մեջ յեղող բույսերը միանման ու միատեսակ չեն լինի։ Նըրանց մեջ կլինի և' թույլը, և' ուժեղը, և' լավը, և' վատը, մի խոսքով, տարբեր բույսերի մեջ անպայման վորոշ տարբերություն կլինի։ Հարց ե ծագում, թե վո՞րն ընտրել այս բույսերից ներսորտային խաչաձեման համար։ Պարզ ե, վոր պետք ե ընտրել ամենափարթամ, ամենալավ զարդացած բույսը։ Իսկ ամենալավ բույսի միջից ել պետք ե ընտրել ամենալավ հասկը։ Խաչաձեման համար յերբեք չպետք ե ընտրել բեշա հասկերը։

Ինչի՞ համար պիտի այսպիսի ընտրություն կատարել ներսորտային խաչաձեման ժամանակ։ Նրա համար, վոր ընտրելով լավագույն, բերքատու ցանքը, լավագույն բույսն այդ ցանքից և լավագույն հասկն այդ բույսից, մենք ընտրում ենք լավագույն սերմացուագագա ցանքի համար։

Յեվ քանի վոր այդ մելով ընտրած հասկի հատիկներն ստացվում են ներսորտային խաչաձեման միջոցով, վորի ժամանակ բույսն իր բեղմնավորման համար ընտրում ե լավագույն ծաղկափոշին, ապա ուրեմն կրկնակի անդամ լավանում ե նրանց վորակը։ Այսպիսով, գուրա ե գույս, վոր խաչաձեմը կատարագ կոլ-

անստեսականը բույսի սերմացույի վորակը լավացնում  
է և՝ ընտրության միջոցով, և՝ խաչաձևան միջոցով:  
իսկ, ինչպես հայտնի յէ, ընտրությունը և ներսորտա-  
յին խաչաձևումը հրաշալի միջոց են բույսերը բարելա-  
վելու, նրանց մեր ցանկացածի պես փոփոխելու և նը-  
րանցից նոր տեսակներ ստեղծելու համար:

Յուրաքանչյուր կոլտնտեսական շատ լավ գիտէ,  
թե ի՞նչ բան ե լավ սերմացուն: Նա գիտէ, վոր վա-  
րունդի սերմացույի համար սկսեք և թողնել ամենալավ  
վարունդը, ձմեռուկի սերմացույի համար պետք ե թող-  
նել ամենալավ ձմեռուկը, պամիզորի համար՝ ամենա-  
լավ պամիզորը, բաղրիջանի համար՝ ամենալավ բաղ-  
րիջանը: Նա գիտե նաև, վոր ցորենի սերմացույի հա-  
հար պետք ե հատկացնել ամենալավ ցանքից ստացված  
հատիկը: Շատ հաճախ մեր կոլտնտեսականները սեր-  
մացույի համար ընտրում են ամենալավ հասկերը, այդ  
ամենալավ հասկերից ընտրում են ամենալավ հատիկ-  
ները, վորի համար կուրում ու հեռացնում են հասկե  
հիմքի և ծայրի թույլ հատիկները:

Մեր կոլտնտեսականներն այսպես են անում, վո-  
րովհետեւի նրանք լով գիտեն, վոր բույսերը փոփո-  
խության են յենթարկվում, վոր բերքառատ ցանք ու-  
րայս կստանան, յեթե ընտրեն լավ, բերքառատատ ցանքի  
և բույսի սերմացու, վոր վատ ցանք ու բույս կստա-  
նան, յեթե սերմացուն վերցնեն նվազ ու անբերքառա-  
տանքից ու բույսից:

Բայց կան մարդիկ (դժբախտաբար գիտնականի  
կոչում ունեցող մարդիկ), վորոնք այդպես չեն մտա-  
ծում: Նրանք կարծում են, վոր մաքուր սորտի, ա-  
սենք թե՝ «Ուկրաինկա» ցորենի, թե՝ լավ բերքառա-  
տանքը և թե վտիտ, վոչ բերքառատ ցանքը տալիս են  
միանման բնույթի, միանման վորակի հատիկ: Վոր  
միանույն ե, «Ուկրաինկան» «Ուկրաինկա» յէ, «Սպի-  
տակահատը»՝ «Սպիտակահատ», «Կոնդիկը»՝ «Կոնդիկ»:  
և նրանց վոր բույսն ել վերցնեա, վտիտ թե տժեզ,  
բերքառատ: Թե անբերքառատ, միանույն ե, կտացվեն:

միանման բնույթի, միանման վորակի հատիկներ։ Այդ մարդիկ ասում են, վոր միևնույն սորտի բույսերի բոլոր հատիկները (հետևապես բոլոր սերմացուները), իրենց բնույթով նման են և յեթե ցանցեն միանման պայմաններում, առա կսաացվի միևնույն արդյունքը։

Այդ մարդիկ ասում են, վոր բույսի միևնույն սորտի սերմերն իրենց բնույթով նման են իրար և այդ բնույթն անփոփոխ է ու ինչքան ել լավ ցանքի կամ լավ բույսի սերմացու ընտրես, ինչքան ել ուշադրություն դարձնեա սերմացույի վորակի վրա, միևնույն ե, այդ սորտը փոխել, բարելավել, ավելի բներքասուդարձնել չես կարող, չես կարող, վորովհետեւի բույսի բնույթն անփոփոխ ե։

Դժուախառարար աղողիսի գիտնականներ մինչեւ այսոր ել կան։ Այդ գիտնականներն ամերիկացի գիտնական Մորդանի անունով կոչվում են մորդանիստներ։ Ահա այդ մորդանիստ գիտնականներն ահազին մնաս են հասցրել մեր սոցիալիստական դյուզատոնառությանը։

Յեվ այդսլիսի գիտնականների դեմ ե, վոր իր աշակերտների հետ միասին անհաջտ պայքար ե մղում մեր յերկրի ամենատառաջավոր գիտնական ակադեմիկ Տրոֆիմ Դենիսովիչ Լիսենկոն։ Նա սկայքարում ե իսկական գիտության համար, նա սովորեցնում ե մեզ, վոր բույսերը փոփոխվում են, սովորեցնում ե դեկտավել բույսերի այդ փոփոխությունն այնպես, վոր նրանք մարդուն տան ավելի բարձր վորակի ու քանակի բերք։

## ՆԵՐՍՈՐՏԱՑԻՆ ԽԱՉԱՉԵՎՄԱՆ ՅԵՂԱՆԱԿ

### Ա. ԿԱՍՏՐԱՑԻԱ

ՎԵՐԵՎՈՒՄ ասվեց, վոր կան բույսեր, վորոնք բեղմնավորվում են ինքնակոշոտման միջոցով, այսինքն՝ բույսի միևնույն ծաղկի մեջ գտնալող իդական բույսերի նիւթ—3

որդանը (վարսանդն իր սպիռվ) փոշոավում ու բեղմ-նավորվում ե հենց նույն ծաղկի մեջ գտնվող արական որդանների (առեջքների) տված ծաղկափոշով:

Սակայն կարելի յէ այնպես անել, վոր ինքնափո-շոտման միջոցով բեղմնավորվող բույսերը բեղմնա-վորվեն վոչ թէ իրենց ծաղկափոշով, այլ ուրիշ բույ-սի ծաղկափոշով, այսինքն՝ բույսը վոչ թէ ինքնափո-շոտվի, այլ փոշոտվի խաչածև կերպով:

Յորենը պատկանում ե ինքնափոշոտման միջոցով բեղմնավորվող բույսերի թվին: Հարց ե ծագում, թէ ինչպես անենք, վորպեսզի թույլ չտանք նրան իր ծաղ-կափոշով փոշոտվելու: Ուրիշ խոսքով, ինչպե՞ս կա-տարենք ցորենի ներսորտային խաչածեռամբ:

Այս հարցի պատասխանը պարզ ե, յեթև ցանկա-նում ենք, վոր մի վորեւե ինքնափոշոտվող բույս բեղմ-նավորվի վոչ թէ իր, այլ ուրիշ բույսի ծաղկափո-շով, պետք է այս բույսի ծաղիկների միջից հեռացնենք առեջքները:

Ուրեմն, յեթև ցանկանում ենք, վոր ցորենի մի բույս բեղմնավորվի ուրիշ բույսի ծաղկափոշով, պետք ե սրա ծաղիկների միջից հեռացնենք առեջքները, կամ այնպես անենք, վոր առեջքները ծաղկափոշի չտան:

Ահա այս գործողությունը, այսինքն՝ առեջք-ների հեռացումը ծաղիկների միջից, կոչվում է կաս-տրացիա: Կաստրացիա յէ կոչվում նաև ամեն մի մի-ջոց (որինակ՝ կտրելը), վորը վնասում է առեջքներին և նրանց զրկում է ծաղկափոշի տալու ընդունակու-թյունից:

Սկսած 1935 թվից, յերբ ակադեմիկ Լիսենկոն ա-ռաջարկեց ներսորտային խաչածեվումը վորպես ցո-րենների սորտերի բարելավման միջոց, լայն աշխա-տանք և տարվում ցորենի կաստրացիան հեշտացնելու և ավելի արդյունավետ դարձնելու համար:

1935 թ. ամառը Ռուսաստանի՝ Սելեկցիայի և Գենե-տիկայի ինստիտուտի աշխատակից, դրկառը Դոլգու-շին առաջարկեց ցորենի ներսորտային խաչածեռմ, անցկացնել սովորական ձևի կաստրացիայի միջոցով:

Իսկ 1936 թվին դոկտոր Դոլգուշինը, ներսորտային խաչաձեվման աշխատանքները հեղտացնելու նպատակով, առաջարկեց հասկերի կաստ բացիան կտարել առեջքների ծայրերը կտրելու միջոցով։ Այս բանը կատարվում է հետևյալ ձեվով։ բարակ ծայրերը ունեցող փոքրիկ մկրատով խուզում են յուրաքանչյուր՝ հասկիկի վերելի ծայրը, բայց խորը չեն խուզում, այլ այնպես են անում, վոր մկրատը կտրի միայն առեջքի վերեվի ծայրերը։ Յեթե առեջքը շատ խորը կտրեն, ապա կլինասվի նաև սպին, իսկ յեթե սպին վնասվի, պարզ ե, վոր հատիկ չի գոյանաւ։ Սրա համար ել հասկիկն այնպես են խուզում, վոր կտրվեն միայն առեջքների վերեվի ծայրերը, իսկ սպին անվնաս մնաւ։ Յերբ հասկիկների ծայրերը ճիշտ ձեվով են խուզում, հասկերն ստանում են այնպիսի ձեւ, ինչպիսին ցույց ե տրված 6-րդ նկարում։

Դոկտոր Դոլգուշինը յենթադրում եր, վոր առեջքներն այս ձեվով կտրվելով՝ ծագկափոշի չեն տա և տվյալ ծաղիկը ծաղկափոշի կստանա ուրիշ բույսից։ Յեվ քանի վոր ծաղիկների թեփուկները խուզելու դեպքում անցք ե բացվում գնդի վարսանդի սպին, ապա ծաղկափոշին քամու միջոցով շատ հեղտությամբ ընկնում և սպիտի վրա, վորը և նետք ե բեղմնավորության համար։



Նկ. 6. Ցոքենի  
հասկի առաքը՝  
խուզելուց հետո

Մի տարի հետո դոկտոր Դոլգուշինն առաջաբեկն ուշադրություն չդարձնել, թե հասկիկների ծայրերը խռովելու ժամանակ առեջները կտրվո՞ւմ են, թե՞ վոչ: Նա ասում էր՝ բայխական և ծաղիկը խուզել այնպես, վոր անցք բացվի դեպի սպին, վորպեսզի ծաղկափոշին այս անցքի միջով հեշտությամբ ընկնի նրա վրա: Իսկ, ինչպես հայտնի յե, յեթե վարսանդի սպիտի վրա ընկնում ե նույն ծաղկի և մի ուրիշ բույսի ծաղկափոշին, ապա բեղմնավորությունը կատարվում է ուրիշ բույսի ծաղկափոշով և վոչ թե նույն ծաղկի ծաղկափոշով (այս մասին ասված ե վերեվում):

Այս ճեմի ներսորտային խաչաձեմման ժամանակ փաստորեն կաստրացիա չի կատարվում, և առեջքները մնում են խուզած ծաղիկների մեջ: Սա նշանակում է, վոր խաչաձեմմում կարող է կատարվել միայն յերկու դեպքում: մեկ այն ժամանակ, յեթե ծաղիկը ժամանակին խուզվի, յերբ դեռ նրա առեջքները կանաչ են ու ծաղկափոշի չեն ավել: Պարզ ե, վոր այս դեպքում ուրիշ բույսերից ծաղկափոշին քամու միջոցով կդա, և այս ծաղիկը կրեղմնավորի, այսինքն՝ կկատարվի խաչաձեմմում: Մեկ ել այն դեպքում, յեթե խուզված ծաղկի սպիտի վրա ճիշտ միաժամանակ ընկնի և իր, և ուրիշ բույսի ծաղկափոշին: Այս դեպքում պարզ է, վոր բեղմնավորությունը կկատարվի ուրիշ բույսի ծաղկափոշով, այսինքն՝ դարձյալ կկատարվի խաչաձեմմում:

Բայց յեթե հասկիկներն ուշ են խուզվել, ու առեջքներն արդեն հասունացել ու ծաղկափոշի յեն աըվել, նշանակում է բեղմնավորությունը կատարվել է ինքնափոշոտման միջոցով, և, հետեւապես, խոսք չի կարող լինել խաչաձեմման մասին:

Կարող ե պատահել, վոր հասկիկները խռովվեն ժամանակին, բայց այնպես խուզվեն, վոր անցք չբացվի դեպի սպին: Այս դեպքում ուրիշ բույսի ծաղկափոշին չի կարող ընկնել խուզված անցքի սպիտի վրա, վորը ծաղկոփոշի կստանա իր սեփական առեջքներից

և, նշանակում ե, դարձյալ չի կատարվի խաչաձեվում,  
այլ կկատարվի ինքնափոշոտում:

Խաչաձեվումն այն ժամանակ կկատարվի անսխալ  
կերպով, յերբ հասկիկներ խուզողը կարողանա ճիշտ  
ընտրել հասկը և ճիշտ խուզել հասկիկները:

Բայց փորձը ցույց է տվել, վոր մեր կոլտնտեսա-  
կաններից յերեք—չորս հոգուց միայն մեկն է կարողա-  
նում ճիշտ կերպով կատարել այդ աշխատանքը. 1937  
թվին Ռւկրախնայում 15.000 կոլտնտեսությունում հասկ  
է խուզվել յեկ մանրամասն ուսումնասիրվել են  
այդ աշխատանքի արդյունքները: Պարզվել է, վոր այդ  
արդյունքները բավարար չեն: Դրա հիման վրա դոկ-  
տոր Դոլգուշինն սռաջարկել է ներսորտային խաչա-  
ձեվման աշխատանքներն անցկացնելու համար կատա-  
րել խկական կաստրացիա, այսինքն՝ առեջքները ՄԻՎ  
հեռացնել ծաղիկներից:

Դոկտոր Դ. Ա. Դոլգուշինի վերջին առաջարկի  
համաձայն, հասկերի հասկիկները դարձյալ պիտի խու-  
զել, վորպեսզի անցք բացվի դեպի վարսանդի սպին, և  
խաչաձեվ փոշոտումը հեշտանա: Հասկերի հասկիկնե-  
րը խուզելուց հետո պետք է կաստրացիայի յենթաք-  
ել ամրող հասկը, հասկի բոլոր ծաղիկները: Ներ-  
սորտային խաչաձեվման աշխատանքները 1938 թվին  
պետք է կատարվեյին այս ձեւով:

Գիտությունների Ակադեմիայի Հայկական  
Ֆիլիալի Բիոլոգիական Ինստիտուտի գիտա-  
կան աշխատակիցներ Գուլքանյանը յեկ Սուր-  
մինյանը 1938 թվին Հայաստանի մի շարք կոլ-  
տընտեսություններում. կիրառել են ցորենի ներսոր-  
տային խաչաձեվում, վորի ընթացքում հասկերը յեն-  
թարկել են կաստրացիայի, առանց հասկի հասկիկները  
խուզելու:

Հասկերի հասկիկներն առանց խուզելու կատար-  
ցիա անելը, համեմատած խուզելով կաստրացիա ա-  
նելու հետ, ունի մի շարք առավելություններ: Ամե-  
նից առաջ անհրաժեշտ չի լինում մերատ գործ ածել:   
Մրա հետեւանքով ահապին խնայողություն է կատար-

վում: 1939 թ. Հայաստանում 400—600 կոլտնտեսություն պետք է ներսորտային խաչաձեվում անցկացնեն: Յեթև հաշվենք, վոր յուրաքանչյուր կոլտնտեսություն պետք է գործ ածի 10—15 հատ մկրատ, ապա ուրեմն խնայվել է 5000—7500 հատ մկրատ:

Բացի սրանից, մկրատ գործ չածելն արագացնում է աշխատանքը, բարձրացնում և նրա արտադրողականությունը:

Յեվ հետո, վոր ամենակարեւորն է, չխուզված հասկերը տալիս էն ավելի խոչոր, ավելի ծանր հատիկներ, քան խուզվածները:

Կարելի յէ յենթադրել, վոր յեթև հասկերի հասկեկները չխուզենք, ապա ծաղկափոշին ծաղկի թփուկների արանքով չի կարող անցնել, և ծաղիկը կմնա առանց բեղմնավորվելու և, հետեւապես, հատիկ չի դոյանա: Յեթև այս յենթադրությունը ճիշտ է, ապա պարզ է, վոր անհրաժեշտ է խուզել հասկերի հասկեկները, վորսլեսզի անցք բացվի դեպի սպին, և այդ անցքով կարողանա անցնել ծաղկափոշին:

Սակայն այդ յենթադրությունը, թե առանց հասկեկների ծայրերը խուզելու ծաղկափոշին չի անցնի դեպի սպին, ճիշտ չէ: Ճիշտ չե, քանի վոր ծաղկափոշին կարող է անցնել անգամ բոլորովին ձեռք չտըլած հասկերի ծաղիկների թեփուկների արանքով: Չե՞ վոր անգամ բնական պայմաններում, առանց մարդու միջամտության, ցորենի խաչաձեռւմ կատարվում է: Սա նշանակում է, վոր ծաղկափոշին կարող է անցնել անգամ ձեռք չտըլած ծաղկաթեփուկների արանքով:

Յերբ բույսի սեռական որդանները միանգամայն հասունանում են, այդ ժամանակ վարսանդի սերմնառանն ուռչում է և, ուռչելով՝ հրում է ծաղկիկային թփուկներին և շատ թե քիչ նրանց հեռացնում միմյանցից: Պարզ է, վոր այս բանն եւ հեշտացնում է վոշուռումը և բեղմնավորությունը:

Յեվ հետո, նկատի պետք է առնել, վոր յերբ հասկերը կաստրացիա յեն արվում, նրանց ծաղիկների թփուկները շատ թե քիչ թուլանում են, շատ թե քիչ հե-

ռանում են իրարից . վորը հնարավորություն է տալիս  
ծաղկափոշուն աղասի կերպով անցնելու ծաղկի մեջ և  
ընկնելու սպիթի վրա :

1938 թվին մեր կատարած աշխատանքը ցույց  
տվեց , վոր առանց հասկերը խուզելու կաստրացիա ա-  
նելու դեպքում , ծաղիկների . բեղմնավորությունը և  
հատիկներ բռնելի ավելի լավ ե կատարվում , քան թե  
հասկերը խուզելով կաստրացիա անելու դեպքում :

## Բ. ՑՈՐԵՆԻ ԿԱՍՏՐԱՑԻԱ. ԿԱՏԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Ցորենի կաստրացիան պետք է սկսել , հենց վոր  
սկսվում ե նրա բույսերի հասկակալումը և պիտի վեր-  
ջացնել մինչև ցանքի մասսայական ծաղկումը : Պետք է  
գիտենալ , վոր ցորենի հասկակալումն էլ , մասսայա-  
կան ծաղկումն ել տեղի յեն ունենում կարճ ժամանա-  
կամիջոցում , ուստի զգույշ պիտի լինել , վոր այդ ժա-  
մանակը ձեռքից չպնա:

Աշնանացան ցորենի հասկակալումը տեսվում է 3-ից  
մինչև 8 որ , զարնանացանինը՝ 2-ից մինչև 4 որ : Ցո-  
րենի մասսայական ծաղկումը տեսում է 2-ից մինչև 3  
որ : Այս ժամանակի տեսողությունը կախված է յեղա-  
նակներից : Յեթև յեղանակը չոր ե ու առք , հասկակա-  
լումն ու ծաղկումը կատարվում է ավելի կարճ ժամա-  
նակամիջոցում , յեթև ցուրտ ե ու խոնավ՝ ավելի  
յերկար ե տեսլում :

Կատրադիան սկսելու համար պետք է ուշադիր  
հետեւլել , թե յե՞րբ ե սկսվում ներսորտային խաչածե-  
ման համար նախառեսված ցանքի հասկակալումը :  
Հասկակալումը օկսված է համարվում այն ժամանակ ,  
յերբ հասկերի ծայրերը մասսայական կերպով սկսում  
են դուրս գալ ռերմվաբներից : Ահա այս մոմենտից ել  
պետք է սկսել կատրացիան :

Իսկ ի՞նչպես կատարել կատրացիան , յերբ հա-  
կերը դեռևս տերմվաբնից դուրս չեն յեկել :

Գարդ ե , վոր ռերմվաբունը պետք է բաց անել ,  
զգույշ կերպով ծալել , և այս ձեւով հանել հասկը :

Այս դործովության ժամանակ տերեվը չպետք է կտրել, տերեվաբունը շպետք և կոտրել, այլ միայն պիտի ծալել։ Յեթև տերեվը կամ տերեվաբունը կոտրվեն, բույսի ոննողառությունը կթուլանա, վորը, սլարդ և, շատ անցակալի յե։

Պետք է առել, վոր քիսանը յերեվալուց 1—2 որ հետո հասկերն սկսում են դուրս գալ տերեվաբներից և այլնս կարիք չի լինում տերեվաբունը բացելու ու ծալելու։ Այս դեպքում կարելի յէ կաստրացիա անել այն հասկերը, վորոնք նոր են դուրս յեկել տերեվաբներից։ Այս հասկերն ամենահարժարներն են կաստրացիայի համար։ Սակայն, ժամանակ շահելու համար, կաստրացիան պետք է սկսել, հենց վոր հասկերի ծայրերն սկսում են դուրս գալ տերեվաբներից։

Կաստրացիան պետք է կատարել մինչև ցանքի մասսայական ծաղկման սկիզբը և վերջացնել, յերբ սկսվում է մասսայական ծաղկումը։

Ինչպես ասացինք, կաստրացիա արած հասկը պետք է ծաղկավոշի ստանա այլ բույսերից։ Ուրեմն, անհրաժեշտ և, վորպեսզի կաստրացիա արած հասկերի շուրջը ուրիշ բույսեր շատ լինեն։ Իսկ վարպեսզի կաստրացիա արված հասկն ամեն կողմից շրջապատված լինի բույսերով, միշտ պետք է կաստրացիայի բույսերն ընտրել ցանքի ներսում, վոչ ոլակաս քան 10—15 մետր հեռավորության վրա ցանքի ափից։ Կարող է պատահել, վոր ներսորդային խաչաձևման համար նախառեսված ցանքի կողքին դանդած լինի ցորենի մի ուրիշ ոորտ։

Որինակ, վորոշված լինի ներսորդային խաչաձեւում կատարել «Երինացենում»-ի ցանքում, վորի կողքին կա «Դելֆի»-ի ցանք, կամ վորոշված լինի ներսորդային խաչաձեւում կատարել և՝ «Երինացենում»-ի, և՝ «Դելֆի»-ի այնպիսի ցանքերի մեջ, վորոնք իրարկած են։

Այսպիսի դեպքում, յերբ «Երինացենում»-ից կաստրացիայի համար բույսերը ընտրվեն «Դելֆի»-ի ցանքից

շատ մոտ, ապա կարող են փոշոտվել «Դելֆի»-ի ծագ-  
կակոշով, իսկ յեթև «Դելֆի»-ից կաստրացիա արվեն  
բույսնը այնպիսի տեղում, վոր շատ մոտ են գտնված  
«Երինացեռում»-ի ցանքին, ապա նրանք կարող են փո-  
շոտվել «Երինացեռում»-ի ծաղկակոշով:

Այսուղիսով, կկատարվի վոչ թե ներսորտային, այլ  
միջառոտային խաչաձեվում, վորը մեր նպատակը չե-  
ս Այսպիսի բան տեղի չունենալու համար, իրար կողքի  
ցանված ցորենի տարբեր սորտերի ցանքերի մեջ կաս-  
տրացիայի հասկերը պետք է ընտրել ցանքերի սահմա-  
նից հետո։ Որինակ՝ «Երինացեռում»-ից կաստրացիայի  
համար բույսեր պիտի ընտել այնպիսի տեղում, վորը  
«Դելֆի»-ի ցանքից հետո յե վոչ պակաս քան 100  
մետր, նույնը պիտի անել «Դելֆի»-ից կաստրացիայի  
բույսեր ընտրելու ժամանակը։

## Գ. ՑՈՐԵՆԻ ՀԱՍԿԻ ԿԱՍՏՐԱՑԻԱՅԻ ԶԵՎԸ

Կաստրացիայի համար պետք է ընտրել այնպիսի  
հասկեր, վորոնց առեջքները դեռ բոլորովին կանաչ  
են։ Դրա համար պետք է ստուգել հանկի մեջ առեղի  
հասկիկների արտաքին ծաղիկներից մեկը, յերկուսը  
և յեթե այդ ծաղիկների առեջքները կանաչ են, ապա  
ուրեմն հասկը կարելի յե կաստրացիայի յենթարկել։

Հաճախ կաստրատորը (այսինքն՝ կաստրացիա կա-  
տարողը) լավ չի ստուգում առեջքների խակ և հասած  
լինելը (խակ առեջքը կանաչ և լինում, իսկ հա-  
սածը՝ դեղին) և սկսում է կաստրացիա կատարել,  
բայց հանկարծ տեսնում է, վոր մի քանի ծաղիկ-  
ների առեջքները բոլորովին հասած են, դեղնել են ու  
նրանց միջից ծաղկափոշի յե թափվում։ Ի՞նչ ողիտի  
անի այս դեպքում կաստրատորը։ Նա այս դեպքում  
պետք է այդ հասկը վոչնչացնի և ընտրի մի այլ հասկ,  
վորի առեջքները խակ են։ Կիսաս կաստրացիա արած  
հասկերի վոչնչացնելն անհրաժեշտ է, քանի վոր յեթև  
այդ հասկերը մնան դաշտում, կարող են շփոթեցնել  
բնոքահավաքի ժամանակ։ Ներսորտային խաչաձեված

Հասկեր հավաքողն այդպիսի հասկերը սխալմամբ կարող ե ընդունել մաքուր կաստրացիա սրած հասկերի տեղ, այսինքն՝ ներսորտային խաչաձևան միջոցով բնեղմնավորված հասկերի տեղ։ Իսկ այդպիսի շփոթության պատճառով ներսորտային խաչսալելումից ստացած սերմացուն կարող ե խառնվել։


Նախքան բացարելը, թե ի՞նչ ձեռվ ե կատարվում կաստրացիան, շատ համառոտ տեղեկություն տանք այն գործիքի մասին, վորով կատարվում ե այդ աշխատանքը։ Այդ գործիքը կոչվում է պինդետ։ Սապատրաստված ե յերկաթից կամ պողպատից։ Թե ի՞նչ ձեվի գործիք ե պինցետը՝ ցույց ե տըլված և 7 նկարում

Կաստրացիա՝ կատարելու ժամանակ պինցետը պետք ե բռնել աջ ձեռքով։

Պետք ե ասել, վոր պինցետի բռնելու ձեվը մեծ նշանակություն ունի կաստրացիան արագ ու վորակով կատարելու համար։ Առհասարակ, ամեն մի կաստրատոր ընտելանում ե պինցետը վորեակ ձեվով բռնելուն։ Բայց կարելի յե հաստատ ասել, վոր հասկելի ծայրի ու հիմքի թույլ հասկելիկները պոկելիս պվելի լավ ե պինցետը բռնել այնպես, ինչպես բռնում են դանակը։ Իսկ հակելիկների ներսի թույլ ծաղիկները յեկ առեջքները պոկելիս՝ ավելի լավ ե պինցետը բռնել այնպես ինչպես բըռնում են մատիտը (նկ. 8 և 10)։

Պինցեան այս ձեռվ բոնելը հնարավորությունն է ու ալիս արագ աշխատելու։ Որինակ, յերբ ուզում ենք պոկել հասկի հիմքի թույլ հասկիկները, պինցեանվ բոնում ենք ամեն մի առանձին հասկիկը և ներքենվ ծուելով՝ ձգում։ Այս դեպքում հասկիկը շատ հեշտ է պոկվում։

Հասկի ծայրի թույլ հասկիկներն առանձին-առանձին չենք պոկում, այլ միասին, միանդամից։ Սրա հո-մար վորոշում ենք, թե քանի՛ հասկիկ պիտի պոկենք հասկի ծայրից։ Յենթաղրենք, թե պետք է պոկենք և հասկիկ։ այս դեպքում, 4-րդ հասկիկի (վերևի ծայ-րից հաշված) հիմքի սահմանում պինցեանվ ամռու



Ն 8. Հասկիկների ներսի թույլ ծաղիկները հանելու ձեռք

բռնում ենք հասկի կոթունը և, ծոելով ներքեվ, ձգում  
ենք վերեվ:

Այս ձեվով հասկիկի ծայրը հեշտությամբ պոկ-  
վում է:

Հասկը կաստրացիա անելու ժամանակ շատ կաս-  
տրատորներ պոկում են նաև հասկի քիստենրը, թեև  
այս բանն անհրաժեշտ չէ:

Դեռք ե ասել, վոր քիստերն ել կարելի և հեշ-  
տությամբ պոկել պինցետով: Սրա համար պինցետով  
պետք է բռնել զույգություն կանգնած քիստերի հիմքից  
և քիստերը շատ արագ ներքեվ ծոելով՝ ձգել վերեվ:   
Այս ձեվով քիստերը շատ հեշտությամբ պոկվում են:

Այսպիսով, մենք անսում ենք, վոր պինցետը շատ  
հասարակ ու միաժամանակ շատ հարմար գործիք է  
հասկի կաստրացիան արագ կերպով ու բարձր վորա-  
կով կատարելու համար:

Կաստրացիա անելու ժամանակ հասկը պետք է  
բռնել ձախ ձեռքի մատների ծայրերով (նկ. 10),  
բայց պետք է բռնել այնպես, վոր հասկը բոլորովին  
չոնդմվի: Յերբեք չի կարելի հասկը սեղմել. սեղմելու  
հետեւվանքով կարող են տրորվել և փչանալ ծաղկի  
վարսանդն ու սպին, վորի պատճառով բեղմնավորու-  
թյուն չի կատարվի, և կաստրացիա արած հասկը նոր-  
մար կերպով հատիկներ չի բռնի:


Չի կարելի հասկը ծալել, չի կարելի ծալել նաև  
ցողունը. հասկը կամ ցողունը ծալելու հետեւվանքով  
սննդառար անոթները կուրվում են յեւ տվյալ  
ցողունի վրա դրայիոդ հասկը սնունդ չի ստանում ու  
չորանում է:

Ցողունը չկուրելու համար կաստրատորը լույսից  
մի քիչ հեռու պիտի նստի և ցողունը վոչ թե ծալի,  
այլ առանց ծալելու. թեքի դեպի իրեն: Ինչքան ըարձր  
են ցողունները, այնքան հեռու պետք է նստել բույ-  
սից:

Կաստրացիայի համար համապատասխան հասկ

ընտրելուց հետո ամենից առաջ պետք է պոկել ու դեն գցել հասկի ծայրի ու հիմքի թույլ հասկիկները և հասկի մնացած մասի հասկիկների միջին ծաղիները (նկ. 10)։ Այսպիսով, հասկից մնում են նրա միջին հասկիկների արտաքին ծաղիկները, վորոնք ամենալավ զարգացած ծաղիկներն են։ Հասկն այս ձևով նախապատրաստելուց հետո կարելի յև կասորնացիան կատարել։

Կասորացիայի համար սպատրաստ հասկը, ինչպես վերեվում ասացինք, պետք է պահել ճախ ձեռքի մոտների ծայրերով։ Բութ մատով ու ցուցամասով պետք է բռնել այն հասկիկի վերեվից, վորի ծաղիկների միջից պիտի հեռացվեն առեջքները։ Այս հասկիկները պետք են լինեն բութ մատից և ցուցամասից ցած և պիտի հենվեն միջին կամ մատանու մատին։ Այս հեն-



Նկ. 9. ա. Հասկեկի ձեր, բ. Հասկիկի ձեր՝ ներսի թույլ ծաղիկներ։  
հանելուց հետո, գ. Հասկիկացին թեփուկը դ. Ծաղկի բարառաքին  
թեփուկը, յե. Ծաղկի ներքին թեփուկը։

Վելն ոգնում և առեջքները հեշտությամբ հանելուն:

Առեջքները ծաղկի միջից հանելու համար պետք է պինցետի ծայրերը միացնել իրար և զդույշ մտցնել ծաղկիկային թեփուկների արանքը ու յերբ պինցետի ծայրերը ծաղկիկային թեփուկների արանքումն են, բայց անել նրանց: Պինցետի ծայրերը չեն կարելի շատ

բայ անել: Պինցետի ծայրերը շատ բաց անելու հետեւ վանքով ծաղկիկային թեփուկներն իրարից շատ հեռանալով՝ կոտրվում են, վորի հետեվանքով վնասովում են նաև վարսանդը:

Յերբ ծաղկիկային թեփուկները մի քիչ հեռացվում են միմյանցից, նրանց արանքում յերեւում են առեջքները և վարսանդն իր ապիով: Պարզ կերպով տեսնելով առեջքները, պետք է պինցետով բռնել նրանց վերեվի ծայրերից յեվ հանել: Առեջքները պիտի բռնել զգույշ, առանց ոեղմելու: Սեղմելու դեպքում նրանց ծայրերն ուղղակի կտրվում են, և կաստրատորը փոխանակ ամբողջ առեջքները հանելու, հանում և նրանց կտորները և ստիպված ե լինում ծաղկի մեջ մնացած առեջքների կտորները փնտուելու:

Ինչպես արդեն ասել ենք, ցորենի յուրաքանչյուր ծաղկի մեջ լինում ե 3 հատ առեջք: Ուրեմն, կաստրատորն ամեն մի ծաղկի միջից պիտի հանի 3 հատ առեջք: Ամեն մի ծաղկից առեջքները հանելիս պիտի հաշվել: Շատ հարմար է լինում, յերբ կաստրատորը հանած առեջքները դնում է բութ մատի յեղունդի կամ հենց նույն մատի, կամ ձեռքի վրա: Սա հնարավորություն է տալիս արագ կերպով ստուդելու, թեքանի՛ առեջք է հանված՝ յերե՞ք, թե՞ պակաս:

Հաճախ պատահում ե, վոր կաստրատորը ծաղկի միջից հանում ե մի հատ ամբողջ առեջք և մեկի կեսը: Սա նշանակում է՝ ծաղկի մեջ դեռ կա ելի մի ամբողջ առեջք և մեկի կեսը, վորը, ի հարկե, պետք ե նույնպես հանել: Քիչ չի պատահում նաև, յերբ կաստրատորը հանում է յերկու ամբողջ առեջք և մեկի կեսը: Պարզ ե, վոր նա առեջքներից մեկը կեսել և այդ կեսը թողել է ծաղկի մեջ, ուրեմն պիտի հանի նաև այդ կես առեջքը:

Վորպեսզի կաստրատորն իմանա, թե ինքը ամբողջակա՞ն առեջքներ ե հանել, թե կիսատ, պետք է լավ պիտենա առեջքի ձեւը: Նա պետք է մի առեջք զգույշ հանի, ուսումնասիրի նրա ձեվը և այնուհետեւ կարող

Ե Գեշտությամբ վորոշել, թե իր հանածն ամրողականո՞ն առեջք է, թե՞ առեջքի կեսը:

Պետք է ասել, վոր կաստրացիա տնելը հեշտ աշխատանք է: Յերբ կաստրատորը վարժվում է աշխատանքի մեջ, նա կարողանում է պինցեռը շատ արագ մացնել ծաղկելի թեփուկների արանքը և համարյա թե միշտ յերեք առեջքներն ել միանգամից հանել:

Մենք առաջինք, վոր առեջքները հանելու ժամանակ պինցետով պիտի բռնել նբանց վերեւիլի ծայրերից: Սա նրա համար է, վորսկազի պինցետի ծայրերը չկպչեն ոպիին: Առհասուրակ զգույշ պիտի լինել, վորպեսի կաստրացիայի ժամանակ վարսանդն ու սպին չմնասվին:

Սակայն միայն վարսանդն ու սպին չեն, վոր պետք է անվնաս մնան. անօդաս պետք է մնան նաև հասկիկային յեզ ծաղկիկային թեփուկները: Պինցետի ծայրով չաղիտի ծակծկել ու քրքրել հասկիկային կամ ծաղկիկային թեփուկները, այդ բանի հետեւսանքով հասկը կարող է չորանալ կամ լրից հասկիկները չբռնել:

Կոստրացիա անելու ժամանակ պետք է ուշադիր լինել, վորողեսզի վորսե հասկիկի, կամ վորսե ծաղկի մեջ առեջքներ չմնան: Դրա համար հասկի ծաղկիկների միջից առեջքները պիտի հանել վորոշ հաջորդանությամբ, վորոշ կարգով:

Կաստրացիան պետք է սկսել հասկի հիմքից և յեթե առաջ կաստրացիա յէ արվում ներքեսի հասկիկի աջ կողմի ծաղկիկը, հետո ձախը, ապա հաջորդ հասկիկի կաստրացիան ել պիտի անել այդ կտրդով, այսինքն գարճյալ առաջ աջը, հետո ձախը, ու այդպես մինչեւ հասկի ծայրը:

Յեթե կաստրացիան սկսվում է հասկիկի ձախ ծաղկից, ապա այդ կտրդով ել պետք և դնալ մինչեւ հասկի ծայրը:

Կարևոյ յէ նաև կաստրացիա անել նախ բարոր հասկիկների աջ կողմի ծաղկիկները, հասկի հիմքից մինչեւ ծայրը, հետո ել ձախ կողմի ծաղկիկները: Հասկի մէ

յերեսի հասկիկների կաստրացիան պիտի վերջացնել և  
գետո սկսել մյուս յերեսի վրա գտնվող հասկիկների  
կաստրացիան:

## Դ) ՅՈՐԵՆԻ ԿԱՍՏՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Յորենի կաստրացիան պարզ ու հեշտ աշխա-  
տանք է: Յուրաքանչյուր կոլտնտեսական 2—3 ժամվա-  
րժացքում կարող ե վարժվել այդ աշխատանքին:  
Վարժված կաստրատորը մի ժամվարժացքում կա-  
րող է կաստրացիա անել 15—20 հասկ: Հետեվապես,  
մի հոգին, որական 6 ժամ աշխատելու դեպքում, կա-  
րող է կաստրացիայի յենթարկել 90—120 հասկ:

Սա նշանակում է, վոր յեթե կոլտնտեսությունն  
ունենա 10 հոգի կաստրացիա անող, ապա 5 որվա ըն-  
թացքում կարող ե կաստրացիա անել 4500-ից մինչև  
6000 հասկ: Յեթե հաշվենք, վոր ամեն մի հասկից  
կստացվի միջին հաշվով 15 հատիկ, ապա կոլտնտե-  
սությունը կստանա 67,500-ից մինչև 90,000 հատիկ:  
Մոտավորապես 30,000 հատիկի քաշը կազմում է մեկ  
կիլոգրամ: Ուրեմն, կոլտնտեսությունը, այսպիսի աշ-  
խատանք կատարելու դեպքում, կստանա 2 կիլոգրա-  
մից մինչև 3 կիլոգրամ ցորեն:

Ներսորտային խաչաձեռում կատարելու համար  
ամենահիմնական խնդիրը վորակյալ կաստրատորներ  
ունենալն է: Յուրաքանչյուր կոլտնտեսության վար-  
չությունը պետք է նախորոք նշանակի 15-ից մինչև  
20 հոգի, վորոնք պետք ե կատարեն ցորենի ներսոր-  
տային խաչաձեվումը:

Փորձը ցույց է տվել, վոր դպրոցական աշակերտ-  
ները, վորոնց տարիքը հասնում է 14-ից մինչև 16-ի,  
17-ի, ավելի լավ են կաստրացիա կատարում, քան թե  
մեծահասակները: Պետք է ասել, վոր աղջիկներն ավելի  
բավ են կաստրացիա անում, քան թե տղաները: Սա-  
կայն անհրաժեշտ ե այսպիսի հաստի ունեցողակիր հետ  
ունենալ 2 կամ 3 հոգի չափահաս կոլտնտեսականներ,

վորոնք կազմակերպեն և ղեկավարեն աշխատանքը :  
Կոլտնտեսության վարչությունը պետք է 2-ից 3  
հոգի ուղարկի վորուե տեղ ցորենի կաստրացիա սովո-  
րելու համար (կամ գյուղատնտեսի մոտ, կամ վորուե  
Հարեան կոլտնտեսություն, վորտեղ գիտեն կաստրա-  
ցիա անելը, կամ համապատասխան կուրսեր) :

Պետք է ուղարկել այսպիսի ընկերների, վորոնք  
միանդամայն համապատասխան են այս գործի համար  
և սիրում են այն: Յեթե Խրճիթ-լարորատորիայի վա-  
րիչը կարող է այսպիսի աշխատանք կատարել, սիրում  
ե այսպիսի գործը, ապա ամենից առաջ նրան պետք  
է ուղարկել սովորելու: Յեթե կոլտնտեսության մեջ  
կան ագրոտեխնիկներ, ապա առաջին հերթին պիտի  
ուղարկել նաև նրանց: Իսկ յեթե կոլտնտեսությունում  
չկա վոչ Խրճիթ-լարորատորիայի վարիչ, վոչ ագրո-  
տեխնիկ, այդ դեպքում պետք է կոլտնտեսականներից  
ընտրել համապատասխան մարդիկ և ուղարկել սովո-  
րելու:

Այս ընկերները, սովորելով, կդառնան կաստրա-  
ցիայի հրահանգիչներ: Այս հրահանգիչները դնալով  
կոլտնտեսություն, իրենց հերթին պետք է սովորեցնեն  
այն 15—20 հոգուն, վորոնց կոլտնտեսությունը նշա-  
նակած կլինի ներսորտային խաչաձեռումը կատա-  
րելու համար:

Ի՞նչպես պետք է կաստրատորներ պատրաստել կոլ-  
տնտեսությունում: Կաստրացիայի հրահանգիչները  
կոլտնտեսության վարչության կողմից նշանակված ըն-  
կերներին պետք է տանեն այն ցանքը, վորը նախա-  
տեսված է ներսորտային խաչաձեվման համար և սո-  
վորեցնեն կաստրացիա կատարելը: Կաստրացիան սովո-  
րեցնելու համար չպետք է ընտրել ցանքի ամենալավ  
մասը, կամ ամենալավ բույսերը, այլ պետք է ընտրել  
ցանքի վատ մասը և վատ բույսերը: Թե ինչու պետք  
է այսպես անել, պարզ է. վարժության համար կաս-  
տրացիա արած հասկերը պետք չեն, սովորողներն ան-  
վարժ լինելու հետևանքով փչացնում են վորոշ քանա-  
կությամբ բույսեր: Այսպիսի կորուստն ավելի լավ

տեղի ունենա ցանքի վատ մասում, քան լավ մա-  
ս:

Սովորեցնելու ժամանակ հրահանդիչներից ամեն  
կը պետք է հավաքի իր շուրջը 6—7 հոգի և ցույց  
ա նրանց, թե ի՞նչպես բռնել պինցետը, ի՞նչպես  
ետք է ընտրել հասկը, ի՞նչպես պետք է բռնել հասկը  
սստրացիայի ժամանակ, ի՞նչպես պիտի նախապատ-  
ճառել հասկը կաստրացիայի համար և ի՞նչպես կատա-  
յլ կաստրացիան։ Հրահանդիչները պետք է բացա-  
ըրեն հասկի կազմությունը, սովորեցնեն, թե վո՞րն  
հասկիկը, ծաղիկը հասկիկային ու ծաղկային թե-  
ռւկը և այլն։ Մի խոսքով՝ սովորողին պետք է սովո-  
րեցնել այնքան բան, ինչքան այս դրքույկում ասված է  
սստրացիա կատարելու ձևի մասին։

Կաստրացիա սովորողները ծանոթանալով կաս-  
տրացիայի ձևին, պետք է սկսեն վարժվել, պետք է  
ատարեն վարժական կաստրացիա, վորի ընթացքում  
հրահանդիչները պետք է մոտենան ամեն մեկին և ոգ-  
նեն ու ստուգեն նրա աշխատանքը։ Վարժական կաս-  
տրացիան շատ կարևոր է, և հրահանդիչները պետք է  
սկսեն, վորպեսզի սովորողները յուրացնեն կաստրացի-  
յի ձևը, վարժվեն և դառնան կաստրատորներ։

Հրահանդիչները պետք է հետավեն, թե սովորող-  
երից ո՞վ է արդեն յուրացըել կաստրացիայի ձևը,  
ո՞վ է կարողանում կաստրացիա կատարել այնպես,  
նչան պահանջվում է այդ։ Յերբ սովորողը յուրաց-  
ում է կաստրացիայի ձևը, այսինքն դառնում է  
աստրատոր, հրահանդիչը պետք է նրան փոխադրի  
անքի այն մասը, վորտեղ պետք է կատարվի արտա-  
ըրական կաստրացիան, այսինքն այն կաստրացիան,  
որը պետք է վոչ թե վարժվելու, այլ ներսորտային  
աշաճեվման համար։

Հրահանդիչը պետք է մի բան շատ լավ իմանա,  
որ ինքը պետք է թույլ տա սովորողին արտադրական  
կաստրացիա կատարելու միայն այն ժամանակ, յերբ  
ա կատարելապես տիրապետել է կաստրացիայի տեխ-

նիկային, յերբ դարձել ե վորակյալ կաստրատոր:  
Յերբ կաստրատորն սկսում ե արտադրական կա-  
րացիա կատարել, հրահանգիչը պետք ե նրան մի  
քանի անգամ ստուգի, վորպեսզի վերջնականապ-  
համոզվի, թե կաստրատորն անսխալ ե աշխատում:

Կաստրացիա արած հասկերը պետք ե նշանակ  
վորեւ աչքի ընկնող դույնի շորով կամ թելով: Այ-  
նահարմարը վառ կարմիր դույնի շորը կամ թելն  
քանի վոր այս դույնը շատ լավ ե աչքի ընկնում ց-  
րենի հասած ցանքի մեջ: Շորի կտորը կամ թե  
պետք ե կապել կաստրացիա արած հասկի ցողունի  
անմիջապես հասկի տակը, կամ հասկից քիչ ցած:

Հրահանգիչը պետք ե ամեն որչա աշխատանք-  
վերջում ստուգի կաստրատորների աշխատանքի վորս  
կը և հաշվի, թե նրանցից ամեն մեկը քանի՛ հասկ  
կաստրացիա արել: Բոլոր կաստրատորների կաստրա-  
ցիա արած հասկերի թիվը պետք ե կանոնավոր կեր  
պով հաշվել ու դրանցել: Հաշվողն ու դրանցողը պետ-  
ք է լինի կամ հրահանգիչը կամ խրճիթ լարորատորիայ  
վարիչը, կամ բրիգադիրը: Այս հաշվառումն անհրա-  
ժեշտ ե նախ նրա համար, վորպեսզի պարզվի, թե ամ-  
բողջ աշխատանքի ժամանակ ընդամենը քանի՛ հասկ ե  
կաստրացիա արել բոլոր կաստրատորները և ապա աշ-  
խորերը կանոնավոր դրանցելու համար:

Կաստրացիա արված հասկերի թիվը հաշվի առ-  
նողն ու դրանցողը պետք ե ունենա մի հատուկ տեսք  
վորի մեջ յուրաքանչյուր կաստրատորին պետք  
հատկացնի: մի եց և այդ եջում դրանցի կաստրացիա  
արած հասկերի թիվը և կաստրացիայի վորակը: Միա-  
ժամանակ այս տեսքում պետք ե դրանցել, թե ի՞ն-  
չորսի ցորեն ե կաստրացիա արված և վո՞ր ցանքում  
կամ վո՞ր դաշտում:

Հաշվառման ժամանակ աշխատանքի վորակը պետք  
ե անպայման նշել: Վորակը նշանակելու ժամանակ  
պետք ե հաշվի առնել, թե կաստրատորը հասկի հետ  
ինամքո՞վ ե վարվել, թե՞ ծակծկել ե ու քրքրել ողին-  
ցետով, մի հասկի վրա քանի՛ հասկիկ ե թողել, չա-

եիչ, թույլ հասկիկները հեռացրել ե թե՞ թողել ե, ամենից կարեորն ե, արդյոք ծաղիկների մեջ աշքներ կամ առեջքների կտորներ չի՞ մոռացել։  
Յորենի հասկերի կաստրացիայի հաշվառման ձեվը

ԲՆՐՍԵՂՅԱՆ ՍԱՐԳԻՄ				ՄԲԴԱՐՑԱՆ ԱՆՍՇԻՏ			
ՑՈՐԵԿԻ ԱՊՐԱԾ	ԿԱՄԱՋ.՝ ՀԱՄԱԿ.՝ ՔԱՆԿԱՐ.	ԱՌՋԱԿԱ- ՎԱՐԱՐ	ԺԱՄԱՆԱԿԱՐ	ԺԱՄԱՆԱԿ	ՑՈՐԵԿԻ ԱՊՐԱԾ	ԿԱՄԱՋ.՝ ՀԱՄԱԿ.՝ ՔԱՆԿԱՐ.	ԱՌՋԱԿԱ- ՎԱՐԱՐ
Սպիտակա- հատ	100	ժիշտակ	5 7	Սպիտակա- հատ	100	ժիշտակ	
"	110	լով	6 7	"	116	լով	
Թուբրի- ցեպս	120	լով	7 7	Թուբրի- ցեպս	126	լով	

Կաստրատորի աշխորի նորմայի հարցը պետք է ուժյան առնվի կոլտնաեսության վարչությունում։ Իցը քննելու ժամանակ նկատի պիտի առնել, վորչափահաս կոլտնաեսականն որական 6 ժամ աշխալու դեպքում կարող ե կաստրացիա անել 80-ից մինչ 100 հասկ։ Յելնելով սրանից, 100 հասկը կարելի հաշվել մեկ աշխոր։ Միաժամանակ հաշվի պետք է նել աշխատանքի վորակը։ Լրիվ աշխոր պետք է լ միայն այն դեպքում, յերբ կաստրատորը կտացիա յե արել 100 հասկ, և աշխատանքի վորակը լ ե, կամ գերազանց։ Միջակ աշխատանքի դեպքում սորը 20 տոկոսով պետք ե պակասեցնել։ Վատ վորվ կատարված աշխատանքը չպետք ե ընդունել։ ԵՐՍՈՐՏԱՑԻՆ ԽԱԶԱԶԵՎՎԱԾ ՀԱՍԿԵՐԻ ՀԱՎԱ

### ՔԱԽՄԸ

Ներսորտային խաչաձեվման համար կաստրացիա ած հասկերը պետք ե հավաքել ամենամեծ խնամքով ուսանց վորեե կորուի։ Մըա համար կատար-

ցիայի ժամանակ պետք և նշանակել և՛ հասկերը, հասկերի տեղը։ Հակառակ դեպքում, ցանքի ամբոխաստայի մեջ չափազանց դժվար կլինի գտնել կատրացիա արած հասկերը։ Այնքան ել հեշտ չի լինի գոնել նաև ցանքի մեջ այն տեղը, վորտեղ կատարվել հասկերի կաստրացիան։ Նա, ով պիտի հավաքի հասկերը, պետք ե աշխատի հիշել հասկերի տեղը, ողագործելով այն նշանները, վորոնք կարող են լինել ցաքի մեջ, կամ ցանքի կողքին (ծառ, թուփ, քար, առևայլն)։

Կաստրացիայից 5—6 որ հետո պետք ե ստուգի թե արդյոք հասկերը բռնե՞լ են, թե՞ վոչ։ Այս բաշտ հեշտ և ստուգել յերբ հասկերը հատիկներ բռնում, նրանց ծաղկային թեփուկներն ամրանում ե փակվում։ Իսկ յերբ հասկերը հատիկներ չեն բռնում, նրանց ծաղկային թեփուկները թույլ են մնում չեն փակվում, չովում են, և հասկն ել թողնում ե շրացած հասկի տպավորություն։

Յեթե կաստրացիա արած հասկերի ստուգում պարզվում ե, վոր աշխատանքն անհաջող ե կատաված, ապա պետք է աշխատել գտնել մի այլ ցան վորտեղ հնարավոր ե լրացուցիչ կաստրացիա կատրել։ Իսկ Հայաստանի պայմաններում այս բանը հնարավոր ե, քանի վոր ցանքերը դտնվելով տարբեր զնաներում, բլուրների ու լեռների տարբեր թեք թյունների վրա, հասունանում են տարբեր ժմանակ։

Ներսորտային խաչաձեված հասկերը պետք է հավաքել բերքահավաքից 1—2 որ առաջ։ Դրա համար խրճիթ-լարորատորիայի վարիչը կամ նա, ում հաննարարված ե հավաքել հասկերը, պետք ե տեղյալինի, թե յե՛րբ ե հնձվելու այն ցանքը, վորտեղ կտարվել ե ներսորտային խաչաձեվումը։ Հաճախ պատահում ե, վոր կոլտնտեսությունը բերքահավաք կատարում ե ցանքի հասունանալուց մի քիչ շուրջինակ՝ «Ուկրախնիա» ցորենի ցանքերը հնձում

ՄԵՎ ՀԱՍՈՒՆԱԳՈՎԱՄԻց ՄԻ ՔԻՉ Առաջ, յԵՐԲ ԲՈՒՅԱԵՐԸ ԴԵ՛Ն  
ԱՄԲՈՂՋՈՎԻՆ չեն դեղնել: Հունձն այսքան շուտ են կա-  
ռարում այն պատճառով, վոր «Ուկրաինկան» շատ  
թափվող ցորեն եւ և շատ հասունանալու, չորանալու  
գեղքում. շատ եւ թափվում: Ահա այս դեպքում, այ-  
սինքն՝ յԵՐԲ ցորենի ցանքը հնձում են լրիվ հասունա-  
ցումից մի քիչ առաջ, պետք եւ ներսորտային խաչա-  
ձեված հասկերը հավաքել հնձից 1—2 որ առաջ:

Տարբեր սորտերի ներսորտային խաչաձեված հաս-  
կերը պետք եւ հավաքել առանձին—առանձին. որինակ՝  
չի կարելի «Դելֆի»—ի հասկերը խառնել «Սպիտակա-  
հատի» հասկերին, կամ «Ռուբրիցեպսինը» «Երինա-  
ցեումին»:

Ցանքի միջից հավաքելով ներսորտային խաչաձե-  
ված բոլոր հասկերը, պետք եւ նրանց միացնել եւ մի  
խուրծ կազմել: Հասկերը հավաքելու ժամանակ նրանց  
ցողունները պետք եւ յերկար լինեն, վորպեսզի խուրծը  
հեշտությամբ եւ լավ կապվի: Այս խրծին պետք եւ կա-  
պել ետիկետ, այսինքն՝ մի թուղթ, վորի մեջ դրանց-  
ված պետք եւ լինի տվյալ շրջանի, գյուղի եւ կոլտնաե-  
սության անունները, ցորենի սորտի անունը եւ ցանքի  
մի հեկտարի բերքատվությունը:

Ներսորտային խաչաձեված հասկերը հավաքելուց  
անմիջապես հետո չպետք եւ փշել, յեթե շտապելու կա-  
րիք չկա: Մեր լեռնային շրջաններում (Մարտոնի,  
Բայազետ, Ախտա եւ այլն) ցորենը հաճախ ուշ եւ հա-  
նում եւ շատ քիչ ժամանակ եւ մնում մինչև աշնան ցան-  
քը: Այս դեպքում, հենց վոր ցորենը հնձում են, կաբ-  
ուռմ են ու ստացած սերմացուն ցանում: Այսպիսի սեր-  
մացուն չի կարող բարձր վորակ ունենալ: Բարձր  
վորակ կարող եւ ունենալ այն սերմացուն,  
վորը միանգամայն հասունացած եւ, բայց ժամանակը  
կարճ լինելու պատճառով շտապում են ցանել յեղած:  
սերմացուն:

Ահա այս դեպքում, յԵՐԲ վոր քիչ ժամանակ եւ մը-  
նում մինչև ցանելը, ի՞նչպես վարվել ներսորտային

խաչաձնված հասկերի հետ։ Պետք և նույնպես ցանել։ Միայն թե լավ կլինի, յեթե մինչև ցանելն այս հասկերի խռորձերը մի քանի որ դրվեն արևի տակ, չորացվեն և հետո փշրվեն ու ցանվեն։

Մնացած վոչ լեռնային շրջաններում, վորտեղ Հնձից մինչև ցանելը շատ ժամանակ կա, յերբեք չպետք ե շտապել հասկերը փշրելու համար։ Գարնանացան ցորենների հասկերը փշրելու համար չպետք ե շտապել վոչ լեռնային և վոչ ել մյուս շրջաններում։ Պետք ե թողնել, վոր քաղած հասկերը միանգամայն չորանան և նոր միայն փշրել։

Փշրելու աշխատանքը պետք ե կատարել շատ խնամքով։ Վոչ մի դեպքում տարբեր սորտերը միմյանց չպիտի խառնել։ Սրա համար յուրաքանչյուր խուրճ պետք ե փշրել առանձին։

Յեթե խռորձը փշրվում ե սեղանի կամ վորեե տախտակի կամ շորի վրա, ապա հաջորդ խռորձը փշրելուց առաջ այս տեղը պետք ե շատ մեծ ուշադրությամբ մաքրել, վորակեսով նախորդ խրճից հառիկ չմնա և չխառնվի նոր խրճի հատիկներին։

Խուրճը փշրելուց առաջ պետք ե ստուգել, թե արգյո՞ք մեջը ցորենի ուրիշ սորտի խառնուրդ չկա։ Յեթե կա, պետք ե հեռացնել։ Ի հարկե, յեթե խաչաձնվումը կատարվել ե պոպուլացիայի մեջ, ապա խրճերի զտասորտությունը պետք ե ստուգել։

Բացի այդ, պետք ե ստուգել, թե արդյոք վերցրած խրճի մեջ քարամրիկով հիվանդ հասկեր չկա՞ն։ Յեթե այդպիսի հասկեր կան, ապա դրանց պետք ե առանձնացնել և վառել։ Մրիկով հիվանդ հասկերը պետք ե վինտոնել շատ մեծ զգուշությամբ, գտնել յեվ հեռացնել։ Հակառակ դեպքում, խաչաձնված հասկերի հատիկները կվարակվեն քարամրիկով, վորոր հետո շատ մեծ վնասներ կարող ե պատճառել։ Յեթե տնօգուշության պատճառով ներսորտային խաչաձնված հասկերի հատիկները վարակվեն քարամրիկով, ապա այդ դեպքում հատիկները պետք ե անսղայման ախտահանել թաց ախտահանումով (ֆորմալինով)։

Ներսորտային խաչաձևած հասկերից պտացված հատիկները պետք ե սլահել առանձին տոպրակների մեջ։ Յուրաքանչյուր տոպրակի մեջ ողնոտք ե դնել նաև այն ետիկետը, վորի մեջ դրված ե տվյալ շրջանի, դյուզի, կոլտնտեսության անունները, ցորենի սորտի անունը և ցանքի մեկ հեկտարի բերքատվությունը։

Այս ետիկետի մեջ պետք ե նշանակել նաև ՆՍԽ-0։ ՆՍԽ-նշանակում ե ներ-սորտային-խաչաձևվում, իսկ 0-ն նշանակում ե, վոր տվյալ սերմացուն ներսորտային խաչաձեվումից սպազված առաջին սերմացուն ։ Յերբ այդ սերմացուն ցանվի և այդ ցանքը սերմացու տա, այն ժամանակ ետիկետի վրա կնշանակվէ ՆՍԽ-1, այս ել վոր ցանվի ու ելի սերմացու տա, ետիկետի վրա կնշանակվի ՆՍԽ-2 և այսպես շարունակ, սարեցտարի կնշանակվեն ներսորտային խաչաձեվման սերմացույի սերունդներ— ՆՍԽ-3, ՆՍԽ-4, ՆՍԽ-5, ՆՍԽ-6 և այլն։

Ետիկետն անհրաժեշտ ե և միշտ պետք ե գրել։  
Ետիկետի ձեւը հետևյալն ե.

Նրջան	· · · · ·
Գյուղ	· · · · ·
Կոլտնտեսություն	· · · · ·
Ցորենի սորտի անունը	· · · · ·
Ցանքի մի հեկտարի բերքատվությունը	· · · · ·
ՆՍԽ-	· · · · ·
Ետիկետը կազմողի ստորագրությունը	· · · · ·

Այս ետիկետի ձեւը չատ պարզ ե և ամեն մի խրճիթ-լորրատորիայի վարիչ, ամեն մի ըրիդադիր, ամեն մի գրադետ կոլտնտեսական կարող ե լրացնել։ Բայց քանի վոր այս ետիկետը դոկումենտ ե, ապա զետք ե վոր նրա լրացնողը լինի կամ խրճիթ-լաբորատորիայի վարիչը, կամ բրիդադիրը։

## ՆԵՐՍՈՐՏԱՅԻՆ ԽԱԶԱՉԵՎՈՒՄԻՑ ՄՏԱՅՎԱԾ ՍԵՐՄԱ- ՅՈՒՅԻ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ


Ներսորտային խաչաձեռամից ստացված սերմացուն  
պետք ե բազմացնել ամենաարագ կերպով։  
Այնքան արագ պիտի կատարել այդ սեր-  
մացույի բազմացումը, վոր հնարավոր լինի 3—4 տար-  
վա ընթացքում կոլտնտեսության ամբողջ հին սերմա-  
ցուն փոխարինել նորով։ Որինակ՝ յեթե ներսորտային  
խաչաձեվումը կատարվում է 1939 թ., ապա այնպես  
պետք է անել, վոր կոլտնտեսության բոլոր հողերը  
1941 կամ 1942 թվին ցանվեն ներսորտային խաչաձե-  
վումից ստացված սերմացույով։

Սերմացույի արագ բազմացման միջոցը լայնաշարք  
ցանքն ե, վորը կիրառել ե Ողեսսայի Գենետիկայի յեկ  
Սելեկցիայի ինստիտուտը։ Ճիշտ ե, զեռ մինչև այժմ  
ել ճշտված չե, թե տարբեր պայմաններում ի՞նչ լայ-  
նություն ունեցող շարքերով պիտի ցանել սերմացուն,  
բայց մի բան լավ հայտնի յե, վոր լայնաշարք ցանքի  
սիստեմն արագացնում ե սերմացույի բազմացումը։

Ողեսսայի Գենետիկայի և Սելեկցիայի ինստիտու-  
տը 1936—1937 թ. թ. ներսորտային խաչաձեռամից  
ստացված ցորենի ցանքը կատարում եր լայն շարքե-  
րով։ Շարքերի լայնությունը թողնվում եր 60—65  
սանտիմետր և հատիկի հեռավորությունը հատիկից՝  
20—30 սանտիմետր։

Այսպիսի ցանքի դեպքում ցորենի մի հատիկն  
ստանում եր 600-ից մինչև 900 քառակուսի սանտի-  
մետր տարածություն։ Հասկանալի յե, վոր այսպիսի  
ցանքը հնարավորություն ե տալիս բույսին ստանալու  
ուժեղ սնունդ։ Սովորական ցանքի ժամանակ այդպիսի  
տարածության վրայի բույսերի թիվը լինում է 150-  
ից մինչև 300։ Այսպիսի ուժեղ սննդի հետեւվանքով  
բույսը շատ ուժեղ թփակալում եր և տալիս եր մինչև

100, իսկ հաճախ ել :100-ից ավելի հասկ (նկ. 11).  
Մի հեկտարի վրա ցանվում ե 2 կիլոդրամ սերմա-



Նկ. 11. Ցորենի բույսի ուժեղ թփակալումը լայնաշարք  
ցանքի դեղքում.

շու և ստացվում է մինչև 20 յենաներ և նույնիսկ ա-  
վելի բերք: Պարզ է, վոր այս ձեվիք շատ արագաց-  
նում եր սերմացույի բազմացումը: Սակայն  
այս ձեսի ցանքից ստացված հատիկները լի-  
նում են մանր: Այսպիսի մանր հատիկներ ստանալը  
բացառվում է նրանով, վոր ուժեղ թվակալած  
բույսի ցողուններն իրենց շատության հետե-  
մանքով բավարար քանակությամբ սնունդ չեն  
ստանում արմատներից, արմատները չեն կարողանում  
այդքան սնունդ հասցնել և, դրա հետեւանքով, այդ-  
պիսի բույսի տված հատիկները լինում են մանր: Ներ-  
կայումս, հենց Ողեսսայի Սելեկցիայի և Գենետիկայի  
ինստիտուտի նախաճեռնությամբ, ուսումնասիրվում ե-  
այն հարցը, թե ի՞նչպիսի լայնություն ունեցող շարքե-  
րով ցանել ցորենը և հատիկը հատիկից ինչքա՞ն հեռու,  
վորպեսզի ստացվեն վոչ մանր հատիկներ: Այս հարցը  
Հայաստանի պայմանների համար ևս պարզված չե-  
նայց կարելի յե ասել, վոր յեթե Հայաստանի պայ-  
մաններում ցորենը ցանվի 20 սմ. լայնություն ունե-  
ցող շարքերով և հատիկը հատիկից 15 սանտիմետր  
հեռավորության վրա, ապա կոտացվի լավ արդյունք:  
Այսպիսի ցանքի դեպքում կարագանա սերմացույի բազ  
մացումը և միաժամանակ հատիկները մանր չեն լինի:

Յեթե սերմացույի բազմացման առաջին տարում  
ցանքը կատարվի վերեվում նշված նորմայով, այսինքն՝  
20 սանտիմետր լայնություն ունեցող շարքերով և  
հատիկը հատիկից 15 սմ. հեռավորության վրա, ա-  
պա կոլտնտեսությունը 3 կիլոգրամ սերմացու ունե-  
նալու դեպքում կարող է ցանել մոտավորապես մի քա-  
ռորդ հեկտար տարածություն: Այդպիսի տարածու-  
թյունից կստացվի 5 ցենտների չափ սերմացու: Յերկ-  
րորդ ժարում այդ սերմացույով կարելի յե ցանել մոտ  
10 հեկտար տարածություն, վորը կտա մոտ 150 ցենտ-  
ներ բերք: Յերրորդ տարում կոլտնտեսությունն այդ  
սերմացույով կարող է ցանել մոտավորապես 100 հեկ-  
տար տարածություն: Սա նշանակում է, վոր չորրորդ  
տարում, սմենաշատ ցանք ունեցող կոլտնտեսություն,

անդամ, ապահովված կլինի ներսորտային խաշաճեամ սերմացույով։ Իսկ սա իր հերթին նշանակում է, վոր ներսորտային խաչաճեվում կատարելուց չորս տարի հետո, կոլտնտեսությունն իր ցորենի ցանքերի յուրաքանչյուր հեկտարից կստանա 1-ից մինչև 4 տեսաներ լրացուցիչ բերք։

Ներսորտային խաչաճեվումից ստացված սերմացույի այսքան արագ բազմացումը սղահանջում է բարձր ազրոտեխնիկա։ Ամենից առաջ անհրաժեշտ է, վարպեսզի ներսորտային խաչաճեվումից ստացված սերմացույի բազմացման համար հատկացվի բարձր վորակ ունեցող հողամաս։ Այս հողամասը պետք է լինի մեծ խնամքով մշակված և պարարտացված, միաժամանակ տղահովված պիտի լինի ջրով։

Վերևում ասացինք, վոր ներսորտային խաչաճեամ սերմացուն պետք է ցանել լայնաշարք ձեւվով (շարքերի հեռավորությունը միմյանցից 20 սմ. և հատիկների հեռավորությունը շարքում՝ 15 սանտիմ.)։ Այսպիսի ցանքը կատարվում է ձեռքով։ Հատիկները պետք է ցանել հատ-հատ։ Ցանքը կատարելու համար պետք է պատրաստել մարդեր։

Մարդերի լայնությունը պետք է հարմարեցնել ջրելուն, այսինքն այնպես պիտի քաշել մարդեր, վոր նրանք հեշտ ու համահավասար կերպով ջրվեն։ Միաժամանակ նկատի պետք է ունենալ, վոր ցորենի շարքերի լայնությունը 20 սմ. է։ Ուրեմն, մարդի լայնությունը պետք է բռնել այնքան, վոր հարմար լինի նըրա մեջ քաշել 4 շարք, 5 շարք կամ 6 շարք, նայած թե ջրելու հարմարությունն ինչպես է։

Ցանելու համար մարդի յերկարությամբ պետք է քաշել իրարից 20 սմ. հեռավորություն ունեցող վորքիկ ակոսներ։ Այս ակոսների խորությունը պետք է լինի 4-ից մինչև 5 սանտիմետր։ Այսպիսի ակոսները հեշտությամբ քաշվում են սրածայր փայտերով։ Փոքրիկ ակոսները քաշելուց հետո մարդերը պետք է բաժաննել ցանողների մեջ և ցանել։

Ըստրաքանչյուր ցանող պետք է ցորենի հատիկներ

ըւ հողը դցի և ծածկի: Կարելի յէ գործն այնպես կազմակերպել, վոր հողը գցած հատիկները վոչ թե ցանողը ծածկի, այլ մեկ ուրիշը:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել, վորպեսզի մարդերի մեջ քաշված փոքրիկ ակոսները ծուռումուտ չլինեն և նրանց միջև պահպանվի 20 սմ. տարածություն: Միաժամանակ ուշադրություն պետք է դարձնել, վորպեսզի հատիկների հեռավորությունը միմյանցից լինի 15 սմ.: Ցանողներին պետք է վարժեցնել, վորպեսզի նրանք կարողանան արագ աշխատելու հետ միասին պահպանել այդ հեռավորությունը:

Ներսորտային խաչաձեվումից ստացած սերմացույի (ՆՍԽ—0) առաջին տարվա ցանքը պետք է մշակվի բանջարանոցային կուլտուրայի նման: Ցորենի շարքերի արանքը պետք է մշակել ձեռքով (հողուրազով, թոխիով): Այնպես պետք է անել, վոր ցանքի մեջ վոչ մի մոլախոտ չլինի: Շարքերի արանքը պետք է միշտ փինըրացրած լինի: Ցանքը ջրելուց հետո, հենց վոր հողը մի քիչ ցամաքեց ու հնարավոր յեղավ ցանքի մեջ մտնել, պետք է հողի յերեսը փինըրացնել: Հողի փինըրացումն այնքան խորը չպիտի կատարել, վոր հողուրազի կամ թոխիի բերանը հասնի բույսի բույսի արմատներին և վնասի նրանց:

Առանձին ուշադրություն պետք է դարձնել ներսորտային խաչաձեված սերմացույի ցանքի զտասորության վրա: Ցանքի հասունացման շրջանում պետք է ուշադիր կերպով դիտել ցանքը, և յեթե կան զանազան խառնուրդներ, հեռացնել: Որինակ, յեթե ցանքը «Սպիտակահատի» ցանք է, բայց մեջը կան «Դելֆիի» բույսեր, ապա այդ բույսերը պետք է հեռացնել: Իսկ յեթե ցանքը «Դելֆիի» ցանք է, բայց մեջը կան «Սպիտակահատի» բույսեր, ուրեմն պետք է հեռացնել «Սպիտակահատ»-ի բույսերը:

ՅԵՐԵ ցանքի անզտասորտությունը հետևանք ե  
այն բանի, վոր ներսորտային խաչաձելումն անց ե  
կացվել պոպուլացիայի մեջ, ապա այդ դեպքում կտ-  
րի կա ցանքը մաքրել խառնուրդներից:

Ներսորտային խաչաձեած սերմացույի ցանքն ա-  
ռաջին տարում պետք ե մաքրել նաև քարամրիկից և  
փոշեմրիկից: Այս աշխատանքը հնարավոր ե հեշտու-  
թյամբ կատարել, քանի վոր ցանքը մեծ չե և, բացի  
այդ, ցորենի բույսերն աճում են կանոնավոր շարքե-  
րով: Պետք ե ուշադիր կերպով դիտել այդ շարքերը  
և, յեթե կան քարամրիկով ու փոշեմրիկով վարակված  
հասկեր, պոկել ու դեն դցել:

Փոշեմրիկով վարակված հասկերը պետք ե հեռաց-  
նել, հենց վոր այդ հասկերը յերեվում են: Իսկ  
այդ հասկերը յերեվում են ցորենի հաս-  
կակալելու ժամանակ: Ուրեմն, ցորենի հասկակալելու  
ժամանակ մի քանի անգամ պետք ե դիտել նանքը և  
փոշեմրիկով վարակված հասկերը հեռացնել:

Փոշեմրիկով վարակված հասկերը չի կարելի պո-  
կել ու թափել, այլ պետք ե վառել կամ թաղել, այլա-  
պես նրանք կշարունակեն վարակել առողջ հասկերը:  
Պետք ե հիշել, վոր ինչքան շուտ հեռացվեն փո-  
շեմրիկով հիվանդ հասկերը, այնքան քիչ կտարածվի  
այդ հիվանդությունը: Կրկնում ենք՝ փոշեմրիկով հի-  
վանդ հասկերը հենց վոր սկսեցին դուրս դալ տերե-  
վարնից, պետք ե անմիջապես հեռացվեն:

Քարամրիկով հիվանդ բույսերը լավ յերեվում են  
ցորենի մոմի հասունացման շրջանում: Ուրեմն, այդ  
ժամանակ ել պետք ե ցանքը զտել քարամրիկով հի-  
վանդ հասկերը հենց վոր սկսեցին դուրս դալ տերե-  
րամրիկով հիվանդ բոլոր բույսերը, ապա այդ ցանքի  
աված սերմացուն կարելի յէ չախտահանել, բայց յեթե

ցանքի մեջ մնացին քարամը ինկով հիվանդ հասկեր,  
ուզու սերմացուն պետք եւ անսղայման ախտահանել:

Դարձյալ հիշեցնենք, վոր ներսուրային խաչաձե-  
լած սերմացույի ցանքը կարելի եւ զտել միայն բագ-  
թացման առաջին տարում։ Հետագա տարիներում այդ  
բանը հնարավոր չե, և լեթե ցանքի մեջ յերեվում է  
քարամը իկ, ապա պետք եւ ստացված սերմացուն ախ-  
տահանել, իսկ յեթե յերեվում եւ փոշեմը իկ, պետք եւ  
կատարել սերմացույի տերմիկական ախտահանում։

---



Պատ. Խմբագիր Դ. Բարտօնյան  
Տեխ. Խմբագիր Վ. Մանուկյան  
Արքագրիչ Հ. Մանուկյան  
Կոնսը. պլքագրիչ Ռ. Տռնյան

---

Հանձնված է շարելու 2 մարտի, 1939 թ.

Ստորագրված և առաջընդունված 10 մայիսի 1939 թ.

Դրավիճակի լիտղոր 11006 Հրատ. № 25

Պատվեր № 559 Տիրաժ 4000

Թղթի չափը 72×105 / 22, 4000

Դ. Խ ն ը Վ ո ւ ր ի ն

61051

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0037197

А  $\frac{I}{2732}$

ЧМР 19

В. ГУЛКАН  
ВНУТРИСОРТОВОЕ  
СКРЕЩИВАНИЕ  
ПШЕНИЦЫ

Издание Ремк.  
Ереван 1939 г.